



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

28(075)

S-38

OCT 2009

28/075  
5-38  
աՄ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

**ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ**

**ՀՅՅԱՏԱՆԵՆԵՅՑ ԱՌԵՔԵԼԵԱՆ ՍՈՒՐԲ ԵՎԵՂԵՑԻՈՑ**

«Իւրաքանչիւր ոք չոր կոչումն կոչեցաւ,  
ի նմին պարտի կալ և մեռանիլ».  
Ս. Կորնթ. Ե. 15-25. Հատվ. ԺԱ. 29.

**Գ Ա Ս Ա Գ Ի Բ Ք**

**ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

ԵՐՐՈՂ ՏՊԱԳՐՈՒՔԻՆ

Աշխատատեղ

Կրօնուսոյց Տփիսիսու Առաջին արական գիմնադիւնի  
Ե Ի

«Կաղեմակի կորպուս»-ի

**ԳԱՐԲԻԷԼ ԱՌԱԳ ԴԱՀ. ՏԷՐ-ԳԱՐԲԻԷԼԵԱՆՑ**

Ի հայրապետական Տեառն Տեառն Մկրտչի Ա.  
Սրբազնագոյն Կարօղիկոսի ամենայն Հայոց



ԹԻՖԼԻՍ, 1904

Տպարան «ՀԵՐՄԷՍ», Մաղաթեան փող. № 15.

14 AUG 2013

6903

ՄԱՐԿԱԿԱՆՈՒՄ

ՏՊՈՒՆՆԵՐԱԿԱՆՈՒՄ

Дозволено цензурою, Тифлисъ, 31-го Августа 1904 года.



2670  
38

Մեծապատիւ Պարոն

ԳՐԻԳՈՐ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԱՌԱՓԵԼԵԱՆՑԻՆ

ՆՈՒՐՈՒՄ Է

Խորին յարգանքով աշխատասիրողը

*Մեծապատիւ Պարոն*

**ԳՐԻԳՈՐ,**

Գով՝ որ վերին Տեսչութիւնից օժտուած լինելով զանազան բարեմասնութիւններով եւ զորահետ միասին ունենալով առաքինի քրիստոնեայ հոգի, որոնց շնորհով նախանձելի պատրաստակամութեամբ աջակցել էք եւ աջակցում բարի ձեռնարկութիւններին, ինչպէս եւ ներկայումս դասագրքիս յոյս ընծայելուն, որպէսզի հայ աշակերտներն եւ աշակերտներ քրիստոսադիր ուսման մէջ դաստիարակուին, իւրեանց սնունդն ստանալով Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցու վարդապետութեամբ, հանեցէք ընդունել այս աշխատութիւնը, որի հակասը զարդարեցի Ձեր անունով:

*Ձեր կենաց համար աղօթող*

**Գաբրիէլ աւագ Բահ. Տէր-Գաբրիէլեանց**

*Ի 16 Սեպտեմբերի 1904 ամի.*

*Տփլիս.*

Համաձայն պատմիչի Վեկախո Հայրապետի ազգիս ընթերցեայ զայս ձեռնարկ «Քրիստոնեական վարդապետքեան» յգտի 'ի անիւ-ինչ հակառակ ընդդէմ դատանոքեան Հայրասանեայց առաքելական Ս. եկեկեցոյ, ուստի չիք արգելք սպազութեան սորին:

Ի 6 Յուլիսի 1894 ամի 'ի Ս. Եջմիածին

Նախագահ Արիսակէս Եպիսկոպոս

ԹԻԻ 101

Ե Ր Կ Ո Ի Խ Օ Ս Ք

Տփլիսու առաջին արական գիմնազիօնի կրօնուսոյց լինելով և 'ի նկատի ունենալով՝ որ վերին դասարանների աշակերտները՝ կրօնի յարմար դասագրքերի բացակայութեան պատճառով, շատ զժուարութիւնների են հանդիպում Հայաստանեայց եկեղեցու Քրիստոնէական վարդապետութիւնը սովորելու, հարկաւոր համարեցի Սալլանթեանցի «կրօնագիտութիւն» և Մսերի «Հրահանգ Քրիստոնէական հաւատոյ» դասագրքերից օգուտ քաղելով՝ կազմել «Քրիստոնէական վարդապետութիւն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ» անունով մի դասագիրք, որ իւր բովանդակութեամբ և ծաւալով յարմար լինի աշակերտներին համար:

Դասագրքիս մէջ բացի «Նիկիական հանգանակ»-ից զրելեմ և մեր եկեղեցու ուղղափառ հաւատոյ «դաւանութիւն»ը, որ աշակերտներն անպատճառ պէտք է սերտեն, 'ի հարկէ ուսուցչի կարևոր բացատրութիւնների օժանդակութեամբ:

Թէ որքան նպատակիս եմ հասել, այդ ցոյց կըտայ անաչառ քննադատութիւնն, որի ամեն մի ցոյց տուած նկատողութիւնն յարգանքով կ'նդունի:

Աւխասախողը:

Մայիսի 3, 1894 թ.

Տփլիս:

## ԴԱՍԱԳԻՐՔՍ ԹՈՅԼԱՏՐՈՒԱԾ Է

Ազգիս Վեհափառ Հայրապետի պատուիրանի համաձայն՝ թ. 1446, 30 օգոստոսի 1894 թուի, հայոց եկեղեցական ծխական ուսումնարաններում գործադրելու համար, իսկ պետական միջնակարգ դպրոցներում՝ Գովկասեան դպրոցական շրջանի պ. հոգաբարձուի գրութեամբ՝ թ. 8645, 31-ն հոկտեմբերի 1894 թուի:

## Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք

### ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ—ՍՈՒՐԲ ԳԻՐՔ

Աստուածաշունչ—Սուրբ գիրքն այն մատենան է, որ Աստուածային հոգու ազդեցութեամբ գրել են Աստուծոց ընտրուած ուրբ մարդիկ, որոնք անուանվում են «Մարգարէք և Առաքեալք»:

Սուրբ Գրքի այն մասն՝ որ գրուեց Քրիստոսից առաջ մարգարէների ձեռքով, անուանվում է «հին կտարան», իսկ Քրիստոսից յետոյ գրուածն առաքեալների ձեռքով՝ կոչվում է «Նոր կտակարան»:

Հին կտակարանում Աստուած խոստանում է մեզ, որ մարդոց Ազամի մեղքից—յաւիտենական դատապարտութիւնից—ազատելու համար կ'ուղարկի իւր Միածին Որդուն. և այս խոստմամբ Աստուած մարդոց սիրտը նախապատրաստեց օրինակներով ու մարգարէների միջոցով խոստացած Փրկչին ընդունելու:

Նոր կտակարանը վկայում է, թէ Աստուած իրաւի շնորհեց մարդոց իւր Միածին Որդին, որ է «Յիսուս Քրիստոս»:

Հին կտակարանը պարունակում է քառասուն և

հինգ (45) գիրք և իւր բովանդակութեամբ չորս կարգի է բաժանվում:

1. Օրինադրական.—Ծննդոց, Ելից, Ղևտացւոց, Թուոց և Երկրորդ օրինաց գրքերն, որոնք գրուած են Մովսէսի ձեռքով և կոչվում են Մովսէսի օրէնք կամ հնգամատեան, սոքա պարունակում են ՚ին օրէնքներն, Աստու խոստումներն և ուխտը,

2. Պատմական.—Յեսուայ, Դատաւորաց, Հռութայ, Թագաւորաց, Մնացորդաց, Եզրասայ, Նեեմայ և Եսթերայ գրքերն, որոնք գլխաւորապէս պարունակում են բարեպաշտ և առաքինի մարդոց պատմութիւնները:

3. Բարոյական կամ վարդապետական.—Յովբայ, Դաւթի և Սողոմոնի գրքերն, որոնք պարունակում են Աստուածգիտութեան ուսումն և մարդկային կեանքին վերաբերեալ կանոններ և խրատներ:

4. Մարգարէական.—Եսայի, Երեմիայի, Եզեկիէլի, Դանիէլի և միւս տասներկու փոքր մարգարէաների գրքերն՝ որոնք պարունակում են մարգարէութիւններ և գուշակութիւններ Յիսուս Քրիստոսի տնօրէնութիւնների մասին:

Նոր կտակարանը պարունակում է քսան և եօթն (27) գիրք և իւր բովանդակութեամբ չորս կարգի է բաժանվում՝

1. Օրինադրական.—Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յովհաննու գրուածները, որոնք կոչվում են Աւետարան, որովհետեւ բարութեան և փրկութեան աւետիք են պարունակում, այսինքն աւետում են մարդկութեանն Փրկչի Գալուստը, Նորա ձեռքով եղած գերագոյն բարիքը, Նորա երկրաւոր կեան-

քի պատմութիւնը, Նորա հրաշալի գործերը. Նորա փրկարար և կենդանարար վարդապետութիւնները, վերջապէս Նորա մահը խաչի վերայ, փառաւոր յարութիւնն և սքանչելի համբարձումն:

Ծանօթ. Թէև չորս աւետարանիչներն էլ խօսում են Յիսուս Քրիստոսի մասին, սակայն ամեն մի աւետարանն իւր առանձնայատկութիւնն ունի, նայելով թէ՛ որ եկեղեցու համար է գրուած և թէ՛ ինչ նպատակով: Այսպէս՝ Մատթէոսն՝ իւր աւետարանը գրելով հրէութիւնից դարձած բրիտոնեաների համար Քրիստոսի համբարձումից 8 տարի յետոյ, գլխաւորապէս խօսում է թէ՛ Յիսուս Քրիստոս հէնց այն Մեսիան է, որ Աստուած խոստացել էր հրէից ազգին, ուստի նա սկսում է Յիսուսի ճիւղագրութիւնն Աբրահամից ու Դաւթից և ցոյց է տալիս որ Նորա վերայ կատարուեցան Մեսիայի մասին եղած բոլոր գուշակութիւնները: Մարկոսը գրեց համբարձումից 15 տարի յետոյ հեթանոսութիւնից դարձածների համար, ուստի նոյա Յիսուսի աստուածութեան մէջ համոզելու համար գլխաւորապէս պատմում է նա Յիսուսի հրաշագործութիւնների մասին: Ղուկասը գրեց համբարձումից 17 տարի յետոյ. նա աւելի մանրամասն և հետեոգութեամբ է խօսում Յիսուսի երկրաւոր կեանքի մասին, որպէս զի հաւատացեալներին բրիտոնեական հաւատի մէջ ամբապնդէ: Յովհաննէս՝ իւր աւետարանը նախընթաց աւետարաններից շատ ուշ գրելով—համբարձումից 53 տարի յետոյ—նշանաւոր կերպով լրացնում է առաջին երեք աւետարանների բովանդակութիւնն և աշխարհի Փրկչի աստուածային արժանաւորութիւնը բացատրում է մի առանձին ոգով:

2. Պատմական.—Գործք առաքելոց գիրքն, որ գրել է Ղուկաս աւետարանիչը Թէոփիլէսի խնդիրքով և պատմում է Սուրբ Հոգու իջնելն առաքեալների վերայ և Քրիստոսի եկեղեցու սկզբնական վիճակը: Գլ-

խաւորապէս խօսում է Պետրոս և Պօղոս առաքեալներին քարոզութիւնների մասին:

3. Բարոյական կամ վարդապետական.—Կաթողիկեայց կամ ընդհանրական եօթն գիրքն՝ որոնցից մէկը գրեց Յակովբոս առաքեալն. երկուսը՝ Պետրոս առաքեալն. երեքը՝ Յովհաննէս և սինը՝ Յուդա առաքեալն. այլև Պօղոս առաքեալը գրեց տասն և չորս մասնաւոր թղթեր—մինը՝ Հռովմայեցւոց, երկուսը՝ Կորնթացւոց, մինը՝ Փիլիպեցւոց, մինը՝ Կողասացւոց, երկուսը՝ Թեսաղոնիկեցւոց, երկուսը՝ Տիմոթէոսին, մինը՝ Տիտոսին, մինը՝ Փիլիմոնին և մինն՝ Եբրայեցւոց. այս բոլոր գրքերն Աւետարանում աւանդած հաւատի վարդապետութիւնների բացատրութիւններն և մեկնութիւններն են:

4. Մարգարէական.—Յովհաննու յայտնութիւնն, որ նկարագրում է Քրիստոսի եկեղեցու ազագայ փառաւոր վիճակը:

Թէ հին և թէ նոր կտակարանի գրքերն, որոնք, թուով 72 են, որոշուած են Սիոն Կաթողիկոսի օրով 768 թ. Պարտաւ քաղաքում գումարած ժողովի մէջ:

Կանոն. Ազամից մինչև Մովսէս մարգարէն աստուածային ճշմարտութիւններն աւանդութեամբ պահպանվում էին. Մովսէսը գրեց Աստուածաշնչի առաջին հինգ գիրքը 3900 տարի աշխարհի ստեղծագործութիւնից յետոյ. հին կտակարանը գրուեց եբրայեցերէն. 7 անիէլի գրքի մի բանի գլխերը՝ քաղկէացւոց լեզուով. նոր կտակարանը՝ յունարէն: Ամենից առաջ թարգմանուեց հին կտակարանը Փարոս կղզու վերայ Պտղոմէոս Ֆիլադելֆոսի օրով 271 թուին Քրիստոսի ծննդից առաջ յունարէն. այս թարգմանութիւնը կոչվում է եօթանասից թարգմանութիւն, որից թարգմանուած է մեր Աստուածաշունչը Սուրբ թարգմանչաց ձեռքով 436 թուին:

## ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Քրիստոնէական վարդապետութիւնն այն ուսումնէ, որ ինքն Յիսուս խօսքով և գործով ու յետոյ Նորա առաքեալները սովորեցրին մեզ մարդոցս թէ խօսքով, թէ գրով և թէ գործով աշխարհիս վերայ Աստուծոյ կամքի համաձայն ապրելու և յաւիտենական կեանքը ժառանգելու համար, այսինքն ճանաչել ճշմարիտ Աստուծուն և հաւատալ նորան, սիրել նորան—կատարել նորա պատուիրանները: «Որ զբան իմ լսէ և հաւատայ Այնմ, որ առաքեացն զիս, ընդունի զկեանս յաւիտենականս» Յով. Ե. 24:

«Այս են յաւիտենական կեանք, զի ծանիրցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս». Յով. Ժէ. 3:

## Հ Ա Ի Ա Տ

Հաւատն Աստուծոյ մեզ պարզեւած մի ներքին լոյս է, շնորհք է, որով կարողանում ենք ճանաչել, ընդունել և խոստովանել այն Աստուածային յայտնութիւնները—ճշմարտութիւններն, որ Աստուած պարզեւել է մարդոցս փրկութեան համար:

Մենք պէտք է հաւատանք աստուածային յայտնութիւններին հենց այն պատճառով, որ նոցա մեզ տուող Աստուած արգար է և ճշմարիտ,

Հաւատն՝ որ ներքին շնորհք է, քրիստոնէայն պարտաւոր է արտայայտել գործով և խոստովանել բերանով:

«Ոչ ամենայն, որ ասէ ցիս Տէր, Տէր, մտցէ յարքայութիւն երկնից, այլ որ առնէ զկամս հօր իմոյ, որ յերկինս է» Մատթ. է. 21:

Քրիստոնէական հաւատի հիմն է ինքն Յիսուս Քրիստոս, որի միջոցով Աստուած խոստացաւ փրկել մարդկան ազգը յաւիտենական դատապարտութիւնից — Ազամի մեղքից. այս խոստումն Աստուած արեց նախ՝ նախամարդոց, նոցա դրախտից արտաքսելու ժամանակ՝ օձին ասելով՝ «Եւ եղից թշնամութիւն ՚ի մէջ քո և ՚ի մէջ կնոջդ. և ՚ի մէջ զաւակի քո և ՚ի մէջ զաւակի դորա. նա սպանեացէ քում գլխոյ, և դու սպասեսցես նորա գարշապարի» գ. ծննդ. Գ. 15. յետոյ՝ նահապետներին, Մովսէսին և միւս մարգարէներին՝ «Բազում մասամբք և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր մարգարէիւք. ՚ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ Որդուովն» Եբր. ա. 1—2:

Քրիստոնէական հաւատը կայանում է նոյն իսկ «Քրիստոսի երկրպագութեան եւ նորա պատուիրաններին» կատարման մէջ.

Յիսուս ուսուցանում էր մարդոց խօսքով և գործով՝ «Ձոր սկսաւ Յիսուս առնել և ուսուցներ» — Գործք ա. 1. իսկ նորա առաքեալներն ու նոցա յաջորդները թէ խօսքով, թէ գործով և թէ գրով սովորեցնում էին այն բոլոր ճշմարտութիւններն, ինչ որ նոքա սովորել էին Յիսուսից՝ «Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, ուսուցէք նոցա պահել զամենայն, զոր ինչ պատուիրեցի ձեզ» Մատթէսս ԻԸ. 19—20:

«Հաստատուն կացէք, և պինդ կալարուք զաւան-

դութիւնսն, զոր ուսարուք եթէ բանիւ և եթէ թղթով մերով» ա. թեսաղ. բ. 14:

### ՔՐԻՍՏՈՆԷԱԿՍԸ ՀԱՒԱՏԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քրիստոնէի հաւատը պէտք է լինի «լուսաւոր, հեզ, հաստատ և կենդանի»:

ա. Քրիստոնէի հաւատը «լուսաւոր» է, երբ նա միշտ ուսումնասիրում է սուրբ Գիրքն, ուսանում է նորա մէջ եղած աստուածային ճշմարտութիւններն և Աստուծուն ու մարդոց վերաբերեալ բոլոր պարտականութիւնները՝ «Քննեցէք զգիրս, զի դուք համարիք նոքօք ունիլ զկեանս յաւիտենականս» Յով. Ե. 39:

բ. Քրիստոնէի հաւատը կը լինի «հեզ», երբ սուրբ Գրքի մէջ պարունակած մարդկային մտքին անհասանելի աստուածային խորհրդներին և ճշմարտութիւններին կը հաւատայ հեզութեամբ, ինչպէս որ Դաւիթ մորգարէն իւր համար վկայում է՝ «Հաւատացի զոր և խօսեցայ, և ես խոնարհ եղէ յոյժ» Սաղ. ՃԺԷ.

գ. Քրիստոնէի հաւատը «հաստատ» կլինի, երբ նա ամբարիշտ մարդոց դատողութիւններին, օրինակներին և գայթակղելի գործերին չի գայթակղուիլ, անշարժ կըմնայ իւր հաւատալիքի մէջ և աշխարհի նեղութիւնների ու փորձանքների առկ չի ընկճուիլ, այլ կըգործանայ ինքն իւր հաւատով, ինչպէս որ Պօղոս առաքեալը պատուիրում է՝ «Արմատացեալք և շինեալք ՚ի Նա, և հաստատեալք ՚ի հաւատս, որպէս ուսայքն» Պօղ. առ. Կող. բ. 7:

դ. Քրիստոնէի հաւատը կենդանի է, երբ նա ու-

նենում է այն ամեն բարի գործերն, որ պահանջում է մեր հաւատն, ինչպէս որ Յակովբ առաքեալը պահանջում է՝ «Զինչ օգուտ իցէ, եղբարք իմ սիրեցեալք, եթէ ասիցէ որ հաւատս ունիլ և գործս ոչ ունիցի. միթէ հաւատք. առանց գործոց ապրեցուցանեն զնա... հաւատք առանց գործոց մեռեալ է»։ Յակ. բ. 14. 29.

ՀԱՒԱՍԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Քրիստոնեան հաւատով մօտենում է Աստծուն և խաղաղութիւն ու արդարութիւն է հաստատում իւր և իւր Արարչի մէջ, ինչպէս որ Պօղոս առաքեալն ասում է՝ «Այսուհետև արդարացեալք ՚ի հաւատոց զխաղաղութիւն կալցուք առ Աստուած՝ ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Հռով. Ե. 1.

Քրիստոնեայն հաւատով որդեգրվում է հօր Աստծուն, ինչպէս որ Պօղոս առաքեալն ասում է՝ «Ամենեքին որդիք Աստուծոյ էք հաւատով ՚ի Յիսուս Քրիստոս»։

Քրիստոնեայն հաւատով ստանում է յաւիտենական կեանք, ինչպէս որ Քրիստոս ասում է՝ «Ամենայն, որ հաւատայ ՚ի Նա, մի կորիցէ, այլ ընկայցի զկեանս յաւիտենականս» Յով. Գ. 19.

Քրիստոնեայն հաւատով բնակեցնում է իւր մէջ Յիսուսին, որ է կատարեալ երջանկութիւն և յաւիտենական կեանք՝ «Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, յիս բնակեցցի և ես ՚ի նմա»։ Յով. 2. 57:

Քրիստոնեայն հաւատով զօրանում է յաղթող հանդիսանալու աշխարհի և իւր մարդկային չար ձրգտումները դէմ՝ «Ամենայն որ յԱստուծոյ ծնեալ է,

յաղթէ աշխարհի՝ և այս է յաղթութիւն, զոր յաղթեմք աշխարհի՝ հաւատքն մեր»։ ա. թ. Յով. Ե. 4:

ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ

Այն բոլոր ճշմարտութիւններն, որոնք պէտք է լինին քրիստոնէի հաւատալիքը բովանդակած են համառօտակի հաւատի հանգանակի մէջ, որի աղբիւրը սուրբ գիրքն է:

Քրիստոնէութեան սկզբներում, ինչպէս Յիսուս աւանդել էր, հաւատի հանգանակը կայանում էր միմիայն հետևեալ խօսքերի մէջ՝ «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ», (Մատթ. ԻԸ. 20). ուրեմն հանգանակի էական մասերն են՝ Հայր, Որդի և Սուրբ հոգի: Այլև Յիսուս այս պաշտելի անունների հետ աւանդեց և հետևեալը՝ «Ուսուցէք նոցա պահել զամենայն, որ ինչ պատուիրեցի ձեզ, և ահա ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ՚ի կատարած աշխարհի» (Մատթ. ԻԸ. 20): Այս համառօտ հանգանակով առաջին դարերի քրիստոնեաները բաւականանում էին. առաքեալներն և աշակերտներն էլ նորա պատուէրի համաձայն սկզբումն աւանդում էին բանաւոր և յետոյ թէ բանաւոր և թէ գրով: Բայց երբ քրիստոնեաների միջից այնպիսի մարդիկ առաջ եկան, որոնք մոլար վարդապետութիւններ էին քարոզում Քրիստոսի աստուածութեան, անձնաւորութեան և մարմնառութեան դէմ, այլև Սուրբ Հոգու աստուածութեան դէմ, ուստի հարկ զգացուեց այդ մոլար վարդապետութիւնները (հերետիկոսութիւն) հերքելու համար այն ժա-

2670  
38



մանակի բոլոր քրիստոնեայ եկեղեցիները ներկայացուցիչներէց ժողով կազմել—այդպիսի ժողովն անուանվում է տիեզերական, որոնք մի քանիսն են եղել, սակայն մեր եկեղեցին ընդունում է առաջին երեք տիեզերական ժողովների վճիռները:

Ծանօթ. Առաջին տիեզերական ժողովը գումարուեց 325 թ. Բիւթանիայի Նիկիա քաղաքում, ուր ներկայ էին 318 հայրապետներ և Սուրբ հոգու ներշնչմամբ ու միաբան հաւանութեամբ հերքելով Աղէքսանդրացի յոյն Արիստի մոլար վարդապետութիւնը գրեցին հետեւալ հանգանակը՝ «Հաւատամք 'ի մի աստուած հայր ամենակալ, արարիչ ամենայն երևելեաց և աներևոյթից: Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ, ծնեալ 'ի Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր. Աստուած յԱստուծոյ, Լոյս 'ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնեալ, ոչ արարեալ, համագոյակից Հօրն: Որով ամենայն ինչ եղև որ յերկինս և որ 'ի վերայ երկրի: Որ յաղագս մեր ժարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ, ժարմնացեալ և մարդացեալ, չարչարեալ և յարուցեալ յերրորդ աւուր. և ելեալ յերկինս և գալոց է միև անգամ դատել զկենդանիս և զմեռեալս: Եւ ի հոգին Սուրբ: Իսկ որք ասենն, էր երբեմն, յորժամ ոչ էր, և մինչև ծնեալ ոչ էր, և թէ յոչէից եղև, կամ յայլմէ ենթակայութենէ կամ յէութենէ ասեն լինել, կամ ստեղծական կամ այլայլելի, կամ փոփոխելի զՈրդին Աստուծոյ. զնոսա նզովէ կաթողիկէ և առաքելական եկեղեցի»:

Այս ժողովին հայաստանեայց եկեղեցու ներկայացուցիչն էր սուրբ Գրիգոր Լուսաւորչի որդին՝ սուրբ Արիստակէս, որ վերադառնալով Հայաստան իւր հետ բերեց Նիկիոյ հանգանակն և (20) քսան յօդուածով կանոններ:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը 326 թուին ազգային ժողով գումարեց Վաղարշապատում և այնտեղ կանոններն ու հանգանակն ընդունելուց յետոյ՝ վերան աւելացրեց—ասե-

լով՝ »Իսկ մեր փառաւորեցուք, որ յառաջ քան զյաւիտեանս երկրպագանելով սրբոյ Երրորդութեան, և միոյ Աստուածութեան—Հօր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն», որ միայն մեր եկեղեցու մէջ է կարգացվում:

Երկրորդ տիեզերական ժողովը գումարուեց 381 թուին Կոստանդինուպոլսում, ուր ներկայ էին 150 հայրապետներ, որոնցից մինն էր մեր հայրապետ Ներսէս Մեծը: Այս ժողովը հերքեց Կ. Պօլսի Մակեդոն պատրիարքի սուրբ հոգու դէմ քարոզած հերետիկոսութիւնն և Նիկիական հանգանակի վերայ յաւելումն անելով կազմում է Կ. Պօլսի ժողովի հանգանակը, որ կարգացվում է այսպէս՝ «Հաւատամք 'ի մի Աստուած, Հայրն ամենակալ, արարիչ երկնի և երկրի, երևելեաց և աներևոյթից: Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Որդին Աստուծոյ միածին, 'ի Հօրէ ծնեալ յառաջ բան զամենայն յալիսեանս. Աստուած յԱստուծոյ, Լոյս 'ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնեալ, ոչ արարեալ, համագոյակից Հօրն: Որով ամենայն ինչ եղև յերկինս և յերկրի: Որ յաղագս մեր ժարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից, ժարմնացեալ 'ի հոգւոյն սրբոյ եւ 'ի Մարիամայ կուսեմ եւ ներմարդացեալ, խաչեալ վասն մեռ առ Պօնսացի Պիղատոսն, և չարչարեալ և քաղեալ և յարուցեալ յերրորդ աւուր ըստ գրոց և ելեալ յերկինս և նստեալ ընդ աջմէ հօրն, և գալոց է միև անգամ հանդերձ փառօք, դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ քաղաւորութեան ոչ եղիցի վախնան: Եւ 'ի հոգին Սուրբ, Տէրն, Կենդանաւան, 'ի Հօրէ ելուղն, ընդ Հօր և Որդոյ երկրպագակիցն և փառաւորակից, որ խօսեցաւ մարգարէիւք: 'ի մի սուրբ կաթողիկէ և առաքելական եկեղեցի: Սոստովանիմք 'ի մի մկրտութիւն, 'ի քաւութիւն մեղաց: Ակն ունիմք յարութեան մեռելոց և կենաց հանդերձեալ յաւիտենին, ամէն»:

Երրորդ Տիեզերական ժողովը գումարուեց 431 թուին Եփեսոսում 200 հայրապետների ներկայութեամբ. այս ժողովը հերքեց Կ. Պօլսի Նեստոր պատրիարքի մոլորութիւնը:

Այս ժողովին թէև մեր հայրապետն ՍՍՀԱԿ ՊԱՐԹԵՒ անձամբ չէ գտնվում, սակայն այդ ժողովի որոշումներն ընդունում է մեր Ղևոնդ, Կորիւն, Յոզիան և Արձան վարդապետների ձեռքով:

Մեր եկեղեցին Նիկիոյ սուրբ ժողովի հանգանակն ընդունելով՝ տեղ—տեղ կարևոր յաւելուածներով ձօնացրել է և պարզաբանել, մասամբ սուրբ Լուսաւորչի և մասամբ էլ նորա սուրբ յաջորդների ձեռքով՝ Եփեսոսի տիեզերական ժողովից առաջ: Բոլոր բացատրութիւնները, կամ յաւելուածները մեր սուրբ հայրապետները վերցրել են Կ. Պօլսի առաջին ժողովի յօրինած հանգանակից: Բացատրութիւնների և յաւելուածների բուն նպատակն էր, մինչև Եփեսոսի ժողովը ծագած ազանդների և հերետիկոսների առաջը փակելն և թոյլ չտալ, որ նոքա որևէ կերպով ներս մտնեն մեր ուղղափառ դաւանութեան մէջ:

Մեր եկեղեցու Նիկական հանգանակը կարգացվում է այսպէս՝ որ բաղկացած է տասներկու մասերից:

1. «Հաւատամք 'ի մի Աստուած, 'ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի, և երկրի, երևելաց և աներևութից:

2. «Եւ 'ի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ Միածին, այսինքն յէութենէ Հօր. Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ և ոչ արարած. նոյն ինքն 'ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և 'ի վերայ յերկրի, երևելիք և աներևոյթիք:

3. «Որ յազազս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ Սրբոյ Կուսէն Հոգովն սրբով. որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ եւ

զամենայն որ ինչ է 'ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք:

4. «Չարչարեալ, խաչեալ, թաղեալ:

5. «Յերրորդ աւուր յարուցեալ:

6. «Ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր:

7. «Պալոյց է նովին մարմնովն եւ փառօք Հօր, 'ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան:

8. «Հաւատամք և 'ի սուրբ Հոգին, յանեղն եւ 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ 'ի մարդարէս եւ յաւետարանս. որ էջն 'ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն եւ բնակեցաւ 'ի սուրբսն:

9. «Հաւատամք եւ 'ի մի միայն, ընդհանրական եւ առաքելական եկեղեցի:

10. «'ի մի մկրտութիւն, յաղաշխարութիւն, 'ի քաւութիւն եւ 'ի թողութիւն մեղաց:

11. «'ի յարութիւն մեռելոց:

12. «'ի դատաստան յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւն երկնից, եւ 'ի կեանս յաւիտենականս»:

Իսկ որք ասենն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր Որդի, կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր Սուրբ Հոգին, կամ թէ՛ յոչէից եղևն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ եւ կամ զսուրբ Հոգին. եւ թէ փոփոխելիք են, կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ Կաթողիկէ եւ առաքելական սուրբ եկեղեցի:

Ծանօթ. Բացի նիկիական հանգանակից մեր եկեղեցին ունի իւր «նուղափառ հաւատոյ դաւանութիւնը», որ ամեն ժամանակ պատարագիչ քահանան, առաւօտեան ժամասացութիւնից առաջ՝ «հրաժարիմք»-ից յետոյ ձեռնամած ասում է՝

«Սոստովանիմք եւ հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն Աստուած անեղ, անձին և անսկիզբն. այլև ծնող Որդւոյ և բղխող Հոգւոյն սրբոյ:

«Հաւատամք զբանն Աստուած, անեղ ծնեալ և սկսեալ 'ի Հօրէ նախ քան զյաւիտեանս, ոչ յետոյ և ոչ կրտսեր, այլ որքան Հայրն Հայր, ընդ նմին և Որդին Որդի:

«Հաւատամք զսուրբ Հոգին Աստուած՝ անեղ, անժամանակ, ոչ ծնեալ, այլ բղխեալ 'ի Հօրէ, էակից Հօր և փառակից Որդւոյ:

«Հաւատամք զԵրրորդութիւն սուրբ՝ մի բնութիւն, մի աստուածութիւն, ոչ երեք աստուածք, այլ մի Աստուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն, արարիչ երևելեաց և աներևոյթից:

«Հաւատամք յեկեղեցի սուրբ զթողութիւն մեղաց՝ հաղորդութեամբ սրբոց:

«Հաւատամք զմինն յերից անձանց զԲանն Աստուած, ծնեալ 'ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. 'ի ժամանակի իջեալ յԱստուածածին կոյս Մարիամ. առեալ յարենէ նորա միաւորեաց ընդ իւրում Աստուածութեանն իննամսեայ ժուժկալեալ յարգանքի անարատ կուսին. և եղև Աստուածն կատարեալ, մարդ կատարեալ հոգւով և մտօք և մարմնով. մի անձն, մի գէժ և միաւորեալ մի բնութիւն: Աստուածն մարդացեալ առանց փոփոխման և առանց այլայլութեան, անսերմն յղութիւն և անապական ծնունդ. որպէս ոչ է սկիզբն Աստուածութեան Նորա՝ և ոչ վախճան մարգկութեան նորա. զի Յիսուս Քրիստոս երէկ և այսօր, նոյն և յաւիտեան:

«Հաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս՝ շրջեալ 'ի վերայ երկրի, յետ երեսուն ամաց եկեալ 'ի մկրտութիւն. Հայր 'ի վերուստ վկայեալ՝ դա է որդի իմ սիրելի, և Հոգին սուրբ աղանակերպ իջեալ 'ի վերայ Նորա. փորձեալ 'ի սա-

տանայէ և յաղթեալ նմա, քարոզեալ մարդկան զփրկութիւն, աշխատեալ մարմնով, վաստակեալ, քաղցեալ և ծառաւեալ. յետոյ եկեալ կամաւ 'ի չարչարանս, խաչեալ և մեռեալ մարմնովն, և կենդանի աստուածութեամբն. մարմինն եղեալ 'ի գերեզմանի միաւորեալ աստուածութեամբն, և Հոգւովն իջեալ 'ի դժոխս՝ անբաժանելի աստուածութեամբն, քարոզեալ հոգւոցն, աւերեալ զդժոխս և ազատեալ զհոգիսն. յետ երից աւուրց յարուցեալ 'ի մեռելոց և երևեալ աշակերտացն:

«Հաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս նովին մարմնովն համբարձեալ յերկինս և նստեալ ընդ աջմէ Հօր. այլև զալոց է նովին մարմնովն և փառօք Հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, որ և յարութիւն ամենայն մարդկան:

«Հաւատամք և զհաստուցումն դորձոց, արդարոցն կիանք յաւիտենական և մեղաւորացն տանջանք յաւիտենական»:

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Հ Ա Ռ Ա Տ

ՄԻՌՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ  
ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

«Հաւատամք ՚ի մի Աստուած.....».

Այս խօսքերով խոստովանում ենք, որ Աստուած կայ և «մի» է, ինչպէս որ վկայում է Հոգին ուրբ Մովսէս մարգարէի բերանով՝ «Լուր Իսրայէլ, զի Տէր Աստուած մեր, Տէր մի է»: Բ. օրինաց. 2. 4., և Պօղոս առաքեալը թէ՛ «Մի Աստուած եւ Հայր ամենեցուն որ ի վերայ ամենայնի եւ ընդ ամենեսին եւ յամենեսին ի մեզ». իսկ թէ Աստուած ինչ է, մեզ անհասկանալի է Նորա գոյութիւնը կամ ընչութիւնը. միայն Սուրբ Գրքից զիտենք, որ Աստուած Հոգի է, սէր է:

Գանձ. Ամեն մի կրօնի հիմքը կազմում է Աստու գոյութիւնը, այս ճշմարտութեան մէջ մարդկային ազգը միշտ համոզուած է եղել: Չկայ և չի եղել մի այնպիսի ժողովուրդ երկրիս վրայ, որ այս կամ այն ձևով մի որևէ գաղափար

չունենայ Աստու ժասին. միմիայն անմիտը կարող է ասել, որ Աստուած չկայ: (Մաղմ. ԺԳ. 1.):

Աստու գոյութիւնը կարող ենք հաստատել նախ՝ Տիեզերքով: Երկրիս վերայ ոչ մի բան ինքն իրան կամ զիպուածով առաջ չէ եկել, այլ հետևանք է մի պատճառի. աշխարհիս գոյութիւնն էլ ենթակայ է այս օրէնքին, ուստի մեր բանականութիւնը մեզ ասում է, որ կայ սկզբնապատճառ, որից առաջ են գալիս բոլոր հետևանքները՝ ներգործութիւններն՝ այդ պատճառն Աստուած է:

Երկրորդ՝ տիեզերքի մէջ եղած նպատակայարմար կարգ ու կանոնով. ներդաշնակութիւնն ու գեղեցկութիւնն ցոյց են տալիս, որ չկայ կարգազրուծիւն առանց կարգադրելի: Բնութեան մէջ առարկաները խելացի իմաստուն կերպով կարգադրուած են, այդ կարգադրութիւնը տեսնում ենք նոցա մասների կանոնաւոր փոխադարձ յարաբերութեան մէջ (օրինակ, ծառ), ամենիմաստ կերպով ուղղած այդ բոլորը դէպի մի ընդհանուր նպատակի, այսինքն նոցա գոյութիւնը պահպանելուն: Ամբողջ աշխարհում ամեն բան այնպէս կարգաւորած է և մի ամբողջութիւն է երևում, կարծես թէ մի անազին գործատուն լինի, որի մէջ ամեն մի անգամը իրար հետ սերտ յարաբերութիւն ունի, որի մէջ ամեն բան փոխադարձ իրար ծառայում են և իբրև միջոց և իբրև նպատակ՝ ուղղուելով մի ընդհանուր նպատակին: Այս նպատակայարմար, իմաստուն կարգադրութիւնը ցոյց է տալիս, որ աշխարհս ստեղծուած է առաջուց նախամտածած իմաստուն յատակագծով և թէ, ապա ուրեմն, աշխարհի արարչագործ պատճառը բանական, ամենիմաստ անձնաւոր էութիւն է: Այս հաստատութիւնը գտնում ենք և սուրբ Գրքում. «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ, և զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն» (Մաղմ. ԺԸ. 1—7). «Որպէս զի մեծ են գործք քո, Տէր, զամենայն ինչ իմաստութեամբ արարեր, և լցան երկիր ստեղծուածովք քովք» (Մաղմ. 69. 24):

Երրորդ՝ ինչպէս երկնային մարմիններն և երկիրն իւր կարգն ու կանոնով մի որոշ օրէնքով են ընթանում, այնպէս

էլ մեր ներքին աշխարհը՝ սիրան էլ որոշ օրէնքները է հետևում, ուրեմն՝ տիեզերքի մէջ և մեր ներսն այս կանոնաւորութիւնը չէ կարող առանց կանոնի, առանց օրէնքի լինել, հետևապէս կայ մէկը, որ օրէնատու է, Որին ամեն ինչ հնազանդվում է՝ դա Աստուածն է,

Օրէնքը, որ մեր հոգու (սրտի) մէջն է և որ ասվում է բարոյական օրէնք՝ խիղճ, անպայման հրամայում է բարի գործել, չարից հեռանալ: Երբ բարի ենք գործում, ներքինն ուրախ է, երբ վատ, չար բան ենք գործում, եթէ մինչև անգամ այդ մասին ոչ ոք չգիտենայ, այն ժամանակ էլ խիղճը մի կրծող որդն է դառնում, որ երբէք չէ մեռնում. ուրեմն, մեծ օրէնատուն, որ մեզ համար բարի է կամենում, մեր սրտի մէջ զրել է խիղճը բարի նպատակի համար, այսպէս՝ Աստուած բարի օրէնատու է:

Սակայն Աստծու միութեան մէջ կան երեք անձինք ա. Հայր Աստուած, որ է պատճառ Որդու անձառ և անժամանակ ծննդեան և Հոգւոյն սրբոյ անհաս և անժամանակ բղխման. բ. Որդի Աստուած յաւիտենական ծնունդ Հօրից և գ. Հոգին սուրբ յաւիտենական բղխումն Հօրից: Այս երեք անձնաւորութիւնները կազմում են մի անձառելի միութիւն, որովհետև սոքա երեքն էլ մի են և հաւասար բնութեամբ, էութեամբ՝ «Երեք են, որք վիայեն յերկինս Հայր, Բան և Հոգի սուրբ և սոքա երեքինս մի են». ա. թ. Յով. Ե. 7»:

«Մկրտեցէք զնոսս՝ յանուն Հօր և Որդւոյ և հոգւոյն սրբոյ», Մատթ. ԻԸ. 19:

«Հաւատաս՝ եթէ Հայր յիս և Ես ՚ի Հայր. Ես և Հայր իմ մի եմք». Յով. Ժ. 30:

Ծանօթ. Արևմտեան եկեղեցին VI (589 թ.) դարի վեջերն սկսեց բարոզել՝ հոգին սուրբ բխումն ՚ի Հօրէ և յՈրդւոյ. այս վար-

դապետութիւնը IX (885 թ.) դարի սկզբներից հաստատապէս ընդունեց կաթողիկ եկեղեցին: Յիսուսի ասածը «Յորժամ եկեսցէ Նա Հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ... Նա զիս փառաւորեսցէ, զի յիմե՛ս անցի առնուցու և պատմեսցէ ձեզ» (Յով. ԺԶ, 13, 14)՝ այսպէս է մեկնում արևմտեան եկեղեցին—յիմե՛ս անցի առնուցու—իմ էութիւնից կը ստանայ, ինձնից բղխում է, որ սխալ մեկնութիւն է. այլ նշանակում է, թէ նոր դաստիարակը ճշմարտութեան հոգին մի նոր բան չի քարոզել որ Քրիստոսի վարդապետութիւնից շոկ բան լինի, այլ հաւատացեալներին կը բացատրի, կը հասկացնի Քրիստոսի քարոզածները:

Թէպէտ հին կտակարանի մէջ Աստծու միութիւնը պարզապէս վիայուած է, բայց այդ աստուածային միութեան մէջ ամենասուրբ երրորդութեան երեք անձանց գոյութիւնը լուսաբանած չէ, այլ աստուածային գործողութիւնների մասին խօսելիս յոգնականաբար է խօսում. «Արասցուք մարդ ըստ պատկերի մերում, եկայք, իջցուք և խառնակեսցուք անդ զլեզուսնոցա», «Ես ընդ ձեզ եմ, ասէ Տէր ամենակալ, և բանն, զոր ուխտիցի ընդ ձեզ... և Հոգին իմ, որ կայ ի միջի ձերում». Անդիա. Բ. 5, 6:

Հին կտակարանի մէջ պարզապէս լուսաբանած չէ երեք անձանց գոյութիւնը նորա համար, որ խրատասիրտ և գէպի բազմաստուածութիւնը ձգտումն ունեցող իսրայէլացւոց ազգին հեռու պահպանէ բազմաստուածութեան գաղափարից:

Սակայն նոր կտակարանի մէջ պարզապէս աստուած է երեք անձանց գոյութիւնը մի Աստուածութեան մէջ, օրինակ, երբ Յիսուս Յորդանան գետում մկրտուեց և դուրս էր գալիս, այն ժամանակ Հոգին

սուրբ աղանակերպ իջաւ նորա վերայ, իսկ Հօր ձայնը լսվում էր՝ «Դա է որդի իմ սիրելի, դա լուարուք»։ Մատթ. ԺԷ. 5. ուրեմն Որդին մկրավում էր, Հոգին իջնում էր աղանակերպ, Հայրը վկայում էր։ Սուրբ Երրորդութեան խորհուրդը նոյնպէս յայտնուեց Քրիստոսի պայծառակերպութեան ժամանակ։ Քրիստոս իւր աշակերտներին պատուիրեց՝ «Գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսս յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյ սրբոյ» Մատթ. ԻԸ 19—20։

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆՔ ԿԱՄ ՄՏՈՐԳԵԼԻՔ

Սուրբ Գիրքն ուսուցանում է մեզ Աստու կատարելութիւններ, որք են՝ Արարիչ։ Ամենակալ, Ամենակարող, անեղ-ինքնագոյ, Հոգի, Յաւիտենական, Անփոփոխ, Ամենուրեք, Ամենագէտ, Ամենատես, ամենասուրբ, Ամենաբարի, Ամենիմաստ։

Այս կատարելութիւններից հանգանակի մէջ յիշուած են Արարիչ և Ամենակալ խօսքերը՝ «Հաւատամք... ՚ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի», որովհետև այդ երկու կատարելութիւնների մէջ պարունակվում են և միւս մնացեալներն, օրինակ, խոստովանելով, թէ Աստուած Արարիչ է և Ամենակալ, խոստովանում ենք, որ Նա է Անեղ-ինքնագոյ, որովհետև արարածն արարածների պատճառ չէ կարող լինել։

Սոստովանելով, որ Աստուած Անեղ-ինքնագոյ է, խոստովանում ենք, որ նա է Յաւիտենական, որով-

հետև սկիզբն չունեցողը՝ վախճան էլ չէ կարող ունենալ։

Սոստովանելով, որ Աստուած Յաւիտենական է, խոստովանում ենք, որ նա է Անփոփոխ, որովհետև թէ բնութեամբ և թէ գոյութեամբ նա երբէք չէ փոփոխվում։

Սոստովանելով, թէ Աստուած անփոփոխ և յաւիտենական է, խոստովանում ենք, որ նա ամենապարզ Հոգի է, որովհետև անփոփոխ և յաւիտենական կարող է լինել այն էակը միայն, որ նիւթից չէ բաղկացած։ Քրիստոս ասում է՝ «Հոգի է Աստուած և երկրպագուաց նորա հոգւով և ճշմարտութեամբ պարտ է երկրպագանել»։ Յով. Գ. 24։

Սոստովանելով, թէ Աստուած ամենապարզ Հոգի է, խոստովանում ենք, որ նա է և Ամենուրեք, որովհետև Նա ամենայն տեղ է իւր աստուածային գօրութեամբ, և եթէ Աստուած ամենուրեք է, ապա ուրեմն Ամենագէտ է և Ամենատես է։

Աստուած Ամենիմաստ է, որովհետև անհուն իմաստութեամբ մարդուն ուղղում է գէպի բարին և ամբողջ տիեզերքը կառավարում է իմաստուն ճարտարապետութեամբ։

Աստուած Ամենաբարի է, որովհետև իւր բարիքը պարգևում է բոլոր արարածներին իւրաքանչիւրին օգուտ բերելու յարմար միջոցներով, ինչպէս Յովհաննէս առաքեալը գրում է՝ «Ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք ՚ի վերուստ են իջեալք առ ի Հօրէ լուսոյ»։ Յով. ա, 17։

Աստուած Ամենասուրբ է, որովհետև նա հեռու

է ամենայն չարիքներից և սիրում է տեսնել մարդոց մէջ արդարութիւն, սրբութիւն:

Աստուած Արդար է, որովհետեւ: Նա մեզ տուել է արդար և բարենպաստակ օրէնքներ, որոնց կատարումն ամենայն ճշմարտութեամբ պահանջելով, արդարութեամբ վարձատրում է օրինակատարներին և պատժում օրինազանցներին:

Աստուած Սուրբ Գրքի մէջ անուանվում է Գթած, Ողորմած, Երկայնամիտ, և Բազումողորմ, որովհետեւ Նա՝ իւր բարիքները մեղաւորներին տալով, սպասում է նոցա դարձին և՛ ներելով յանցանքները, մօտեցնում է իրեն:

Սուրբ Գրքի մէջ Աստծուն վերագրած են նոյնպէս մարդու զգայարաններն, օրինակ, Աջ տեսնոն, Ակն տեսնոն, Ականջ տեսնոն և այլն, որով մարդոց հասկացնումեն Աստծու ամենագորութիւնը, ամենուրեքութիւնը, ամենագիտութիւնը:

## Սուրբ Երրորդութեան սուսչին անձնի Հայր Աստուած

Ա Ր Ա Ր Չ Ա Գ Ո Ր Ծ Ո Ի Թ Ի Ի Ն

«Հաւաստմք... ի՛ Հայրն ամենակալ, յԱւարիցն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւոյթից».

Այս խօսքերով դաւանում ենք և խոստովանում, թէ ամենասուրբ երրօգութեան անձներից մինը, որ որոշվում է Հայր անունով, իւր ամենակարող Բանիւ և սուրբ Հոգևով ոչնչից ստեղծեց բոլոր երկնաւոր և երկրաւոր, երևելի և աներևոյթ արարածներն, ինչպէս որ սուրբ Գիրքը վկայում է, «Ի սկզբանէ աւրար Աստուած զերկինն և զերկիր, և երկիր էր աներևոյթ և անպատրաստ և խաւար ՚ի վերայ անդնդոց և Հոգի Աստուծոյ շրջէր ՚ի վերայ ջրոց» ծննդ. ա. 1: Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն. Նա էր ՚ի սկզբանէ առ Աստուած. ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչինչ» Յով. Ա. 1:

«Ողորմութեամբ Տեսնոն լի եղև երկիր և բանիւ Տեսնոն երկինք հաստատեցան և Հոգևով բերանոյ նորա ամենայն գորութիւնք նոցա» Սաղ. ԼԲ. 6:

Աներևոյթ արարածները հրեշտակներն են, և մարդոց հոգիքը: Հրեշտակներն անմարմին, անմահ հոգիներ են և ստեղծուած են Արարչին սպասաւորելու համար:

Հրեշտակները բաժանվում են բարի և չար: Բարի անուանվում են այն հրեշտակները, որոնք անփոփոխ մնացին Աստծուն հնազանդ. սոքա բազմաթիւ են և բաժանվում են ինն դասերի՝ Սերովբէք, Քերովբէք, Աթոռք, Իշխանութիւնք, Պետութիւնք, Զօրութիւնք, Տէրութիւնք, հրեշտակք և հրեշտակապետք:

Զար հրեշտակներ—սատանաներ, դևեր և չար ոգիներ՝ նոքա են, որոնք իւրեանց ամբարտաւանութեամբ Աստծու դէմ մեղանշելով՝ կորցրին իւրեանց երջանկութիւնն և դատապարտուեցան յաւիտենական պատժի:

Երեւելիքն աշխարհն է իւր զանազան տեսակ նիւթական գոյացութիւններով, որ Աստուած ոչնչից ստեղծեց վեց օրում:

Առաջի օրն ստեղծեց լոյսը:

Երկրորդ օրը՝ հաստատութիւնը (օդ):

Երրորդ օրը՝ ջուրը ցամաքից բաժանեց և հրամայեց, որ ցամաքի վերայ աճեն բոյսեր:

Չորրորդ օրն՝ երկնային մարմիններն— արեգակը, լուսինն և աստղերը:

Հինգերորդ օրն՝ օգում թռչուններն և ջրում ձկները:

Վեցերորդ օրը՝ բոլոր չորքոտանի կենդանիներն և ապա մարդը:

Նիւթական աշխարհի Բոլոր գոյացութիւններից գերագոյնն է մարդն, որովհետև Աստուած մարդուն տուել է հոգի և բանականութիւն մտածելու, խորհելու, դատելու և զարգարել է նորան իւր պատկերով, որ հոգւոյ անմահութիւն է, սրբութիւն է:

Թէև մարդու պատուիրանազանցութեամբ աղօտացաւ այդ աստուածային պատկերը, սակայն իւր Միածին Որդու միջոցով նորոգեց նոյնն և հարթեց մարդու առաջ փրկութեան ճանապարհը, որ տանում է դէպի յաւիտենական կեանքը, որի համար և ստեղծել էր: Պօղոս առաքեալն ասում է՝ «Այլ Աստուած, որ մեծն է ողորմութեամբ վասն սիրոյն, զոր սիրեաց զմեզ, մինչդեռ մեռեալք էաք ՚ի մեղս, կենդանիս արար զմեզ ՚ի Յիսուս Քրիստոս»:

«Որպէս Ազամաւն ասենեքեան մեռանին, նոյնպէս և Քրիստոսիւ ամենեքեան կենդանացին»:

### ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆ

Աստուած՝ աշխարհը ոչնչից վեց օրում ստեղծելով ու տեսնելով որ ամեն ինչ բարի է, եօթներորդ օրը հանգստացաւ, այսինքն այլևս բան չստեղծեց, սակայն իւր ստեղծածն անխնամ չթողեց, նա սկսեց իւր ստեղծածը պահպանել, ինամել՝ Քրիստոս ասում է՝ «Հայր իմ մինչև ցայժմ գործէ և ես գործեմ. Յով. Ե. 17: Ես տայ ամենայնի կեանս և շունչս զամենայն ինչ. զինովաւ կեամք և շարժիմք և եմք». Գործ. Ժէ. 25, 28:

Այսպէս՝ Աստուած իւր նախախնամութեամբ՝ որ է նորա ամենակարող, ամենխմաստ և բարի ներգործող գորութիւնը, կառավարում է և պահպանում բոլոր սրարածններին, հոգալով նոցա ամեն պիտոյքն, և անխըտրմբար ինամում երկրիս վերայ թէ արդարներին և թէ մեղաւորներին:

Այսպիսի նախախնամութեամբ Աստուած կառավարում է և պահպանում իւր եկեղեցին և պիտի պահպանի յաւիտեանս: Եթէ հին և նոր եկեղեցին՝ այնքան հալածանքներին և դժուարութիւններին տանելով, մինչև այսօր պահպանել է իւր գոյութիւնը, այդ անհերքելի ապացոյց է Աստուծոյ յատուկ նախախնամութեան: Քրիստոս ասում է՝ «Ես ընդ ձեզ եմ գամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի» Մատթ. ԻԸ. 20:

## Սուրբ Երրորդութեան երկրորդ անձն

Ո Ր Դ Ի Ն Ա Ս Տ Ո Ի Ա Մ

«Հաստատւած է ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յնորին Աստուծոյ, ծնեալն յԱստուծայ Հօրէ Միածին՝ այսինքն յեութենէ Հօր. Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած հեմարիս յԱստուծոյ հեմարէ՝ ծնունդ եւ ոչ արարած. նոյն ինքն ի բնութենէ հօր, որով ամենայն ինչ եղել յերկինս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթ»:

Այս գաւանութեամբ խոստովանում ենք, որ մեր միակ Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոս ասենասուրբ երրորդութեան երկրորդ անձն՝ Աստուծոյ Որդին է, որ յաւիտենից առաջ հօրից ծնուած է, նա Միածին է և

չկայ ուրիշ մէկը նորա նման. այսինքն հօր և սուրբ հոգւոյն էակից, արարչակից, համաբուն, համափառ և համագօր է, նա ինչպէս լոյսը լուսից, ճշմարիտ Աստուած ճշմարիտ Աստուծոց յաւիտենից առաջ ծնուած է և ոչ արարած—ստեղծուած է. և ամեն ինչ նորանով է եղել:

«Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կասարեալպէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն հոգւովն սրբով. որով էառ զմարմին, զհոգի եւ զմիս եւ զամենայն որ ինչ է ի մարդ, հեմարսապէս եւ ոչ կարծեօք»:

Խոստովանում ենք, թէ Որդին Աստուած հօր և Սուրբ հոգու կամբով մարդացաւ, ճշմարտապէս մարդկային մարմին և բնութիւն առաւ Սուրբ Կոյս Մարիամից: Եւ որովհետեւ Սուրբ Կոյս Մարիամը Յօւղայի ցեղիցն և Գաւթի ազգիցն էր, այս պատճառով էլ Աստուած՝ և Աստուծու որդին, որ եղաւ մարդ, անուանուեց Որդի Աստուծու և որդի մարդոյ: «Ահա կոյս յղացի և ծնցի որդի և կոչեսցեն զանուն նորա էմանուէլ, որ թարգմանի ընդ մեզ Աստուած» Եսայի:

«Հողին սուրբ եկեսցէ ի քեզ եւ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո»։ Դուկ. Ա. 55:

Խոստովանում ենք, թէ Որդին Աստուած, աւետարեք հրեշտակի խօսքի համաձայն՝ անուանուեց Յիսուս, որ է Փրկիչ, մարդկային ազգը մեղքից և մահուան գատապարտութիւնից փրկելու համար՝ «Ծնցի որդի, և կոչեսցես զանուն նորա Յիսուս, զինա փրք-

կեսցէ զժողովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց» Մատթ. Ա. 21:

Յիսուս անուանովում է և Քրիստոս՝ Մեսսիա, որ նշանակում է Օծեալ. նախ՝ որովհետև տեսնում էին նորա վերայ այն բոլոր գործերն և կատարելութիւններն, որոնք գուշակել էին մարգարէները Մեսսիայի մասին, որին սպասում էին անհամբերութեամբ:

Երկրորդ՝ նորա համար, որ Յիսուս կատարեց իւր կեանքի մէջ մարգարէի, քահանայի և թագաւորի պաշտօնն, որոնք երբայական եկեղեցու օրէնքի համաձայն օծվում էին իւրով. իսկ Յիսուս յաւիտենից օծեալ էր սուրբ հոգուց:

Յիսուս մարգարէի պաշտօնն աւելի գերազանցութեամբ կատարեց, քան թէ միւս մարգարէները, որովհետև նա ուսուցանում էր մարդոց Աստծու կամքը, ցոյց էր տալիս մարդոց բարոյականութեան փրկարար ճանապարհը. նա բարոգում էր, որ Աստուած ամեն միւսին իւր գործի համեմատ կըճատուցանէ. նա աստուածային հրաշքներով ապացուցանում էր, որ ինքն Աստծու առաքեալ է՝ «Եթէ ոչ գործեմ զգործս հօր իմոյ, մի հաւատայք ինձ»:

Յիսուս կատարեց քահանայի պաշտօնն աւելի գերազանցութեամբ, քան Ահարոնեան քահանաները, որովհետև նա աստուածաբար թողնում էր մարդոց իւրեանց մեղքերը: Նա իւր կեանքը պատարագեց մարդոց փրկութեան համար սուրբ խաչի սեղանի վրայ. նա եղաւ նոր ուխտի միջնորդ Աստծու և մարդոց մէջ. նա երկնքում միշտ բարեխօս է հօր մօտ մեր մեղքերի թողութեան համար:

Յիսուս ոչ թէ երկրաւոր թագաւոր էր, ինչպէս

հրէաները կարծում էին, այլ հոգևոր և երկնաւոր թագաւոր է բոլոր տիեզերքի, մանաւանդ իւր եկեղեցու, որի հետ յաւիտեան լինել խոստացաւ, և ինամում է ու պահպանում նորան: «Իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ». Յով ժԸ. 36:

«Եւ տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի հօր նորա և թագաւորեսցէ 'ի վերայ տանն Յակովբայ յաւիտեան, և թագաւորութեան նորա վախճան մի լիցի». Դուկ. Ա. 31—34:

«Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի». Մատթ. ԻԸ. 20:

Ծանօթ. Հայաստանեայց եկեղեցին դաւանում է, որ Աստծու որդին, որ սուրբ Մարիամից առնելով մարդկային բնութիւնն և միացնելով իւր աստուածային անձի և բնութեան հետ՝ եղաւ կատարեալ մարդ հոգևով, մտքով և մարմնով, կատարեալ Աստուածութեամբ. մի անձն, մի դէմ և միաւորեալ մի բնութիւն երկու բնութիւնից՝ անշփոթ և անբաժան միաւորած միմեանց հետ մէկ անձի—Քրիստոսի մէջ:

«Չարչարեալ, խաչեալ, քաղեալ».

Այս դաւանութեամբ նախ՝ խոստովանում ենք, թէ Յիսուս իւր ճշմարիտ վարդապետութիւնը մարդոց ուսուցանելուց յետոյ, ամենասուրբ երրորդութեան նախասահման անօրէնութեան համաձայն, կամեցաւ իւր անձը զոհաբերել մարդկային ազգի փրկութեան համար. ուստի կամաւորապէս յանձն առաւ չարչարուել իւր վարդապետութեան հակառակորդներից և, 'ի լըրումն ամեն տեսակ անարգական չարչարանքների՝

բարձրանալ խաչի վերայ մարդկանց մեղքի և մահի դատապարտութիւնից ազատելու համար:

Երկրորդ՝ խոստովանում ենք, թէ Յիսուս խաչի վրայ ճշմարտապէս մեռաւ և թաղուեց գերեզմանում: Նա իւր անպարտական մահով ջնջեց մեր հակառակութեան կամ թշնամութեան ձեռագիրը. «Ջնջեաց զձերագիր մերոյ հակառակութեանն հրամանօք իւրովք, որ կայր մեզ հակառակ՝ եբարձ գայն 'ի միջոյ, և բեւեռեաց ընդ խաչափայտին»: Պողոս. Բ. 14: Նա մեզ հաշտեցրեց Հայր Աստծու հետ և ազատեց յաւիտենական դատապարտութիւնից—Աղամայ սեղքից:

«ԵՆՏՐՈՂ ԱՆՈՒՐ ԵԱՐՈՅԵԱՎ».

Այս խօսքերով խոստովանում ենք, թէ Յիսուս, իւր և ուրիշ շատ մարգարէների գուշակութիւնների համաձայն՝ իւր թաղման երրորդ օրը յարութիւն առաւ: Նա իւր յարութեամբ հաստատեց մեր ապագայ յարութիւնն և յաւիտենական կենաց յոյսը՝ «Եղև պտուղ և անդրանիկ ամենայն ննջեցելոց... և ետ յոյս հաստատութեան վերստին նորոգման կենդանութեան ասենայն մարդկան»—Ժամագիրք:

«Ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն նստալ ընդ աջմէ հօր».

Այս դաւանութեամբ խոստովանում ենք, թէ Յիսուս, իւր յարութիւնից յետոյ՝ յաճախ երևում էր իւր աշակերտներին և խօսում էր նոցա հետ Աստծու ար-

քայութեան մասին. Նա նրանց տալիս էր պատուէրներ և խոստացաւ ուղարկել Սուրբ հոգին՝ նրանց զօրացնելու և միխթարելու համար: Եւ ապա Յիսուս, քառասներորդ օրը Չիթենեաց սարի վրայ իւր աշակերտներին օրհնելով՝ համբարձուեց երկինքն և Հօր աջ կողմը նստաւ, այսինքն Յիսուս՝ հայրական բոլոր տնօրէնութիւնները կատարելով, նոյն մարմնովն երկինքը վերացաւ և աստուածային փառքը մտաւ, որ յաւիտենից հօրից ունէր՝ «Ո՛չ զնոյնս պարտէր շարշարիլ Բրիստոսի, և մտանել 'ի փառս իւր» Դուկ. ԻԴ. 26:

Ծանօթ. Տնօրէնութիւններն ասելով պէտք է հասկանալ Բրիստոսի մարդկութեան խորհուրդներն, այսինքն նորա յղութիւնը, Ծնունդը, Մկրտութիւնը, Բարոգութիւնը, հրաշագործութիւնը, շարշարանքը, մահը, յարութիւնը, համբարձումն և Հօր աջ կողմը նստելը:

«Գալոց է նովին մարմնովն եւ փառօք հօր 'ի դասել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ քազաւորութեան ոչ գոյ վախճան».

Այս խօսքերով դաւանում ենք, թէ Յիսուս նոյն մարդկային մարմնով և Հօր փառքով կրկին դալու է աշխարհ կենդանիներին և մեռածներին արդարապէս դատելու՝ մեղաւորներին յաւիտենական պատիժ, արդարներին յաւիտենական երջանկութիւն յատկացնելու և ամենքի վերայ յաւիտենական թագաւորելու: «Եւ յորժամ եկեսցէ Որդի մարդոյ փառօք իւրովք և ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց, և ժողովեացին առաջի նորա ամենայն ազգք և այլն»: Մատթ. ԻԵ. 31, 32:

ԱՍՏՈՒԱԾՈՐԴՈՒ ՄԱՐԿԵՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ  
ՄՈՂՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ա. Աստուածորդու մարդեղութեան դէմ եղած մոլորութիւններից առաջինն է հրէից ազգի մոլորութիւնը, որ Յիսուսին ակնկալեալ Մեսիան չհամարելով՝ դեռ ևս սպասում է նոր Մեսսիայի գալստեանն. այն ինչ ակնկալեալ Մեսսիայի վերաբերութեամբ մարգարէների բոլոր գուշակութիւնները բառ առ բառ, կետ առ կետ անթերի կատարուել են Յիսուս Քրիստոսով, որովհետև նախ՝ Մեսիան պէտք է գար Զորաբարէլի շինած տաճարն և, Անգեայ ու Մաղաքիա մարգարէների գուշակածին համաձայն՝ այնտեղ պիտի քարոզէր ոգոց խաղաղութիւն. այն ինչ Զորաբարէլի տաճարն անա 19 դար է, որ կործանուել է և նորա մէջ եղած զոհերը, պատարագները՝ սրբութիւնն ու սեղանները, որոնք ճշմարիտ Մեսսիայով կատարուելիք քառութեան և փրկագործութեան ստուերական նմանութիւններն էին՝ բարձուել են:

Երկրորդ՝ Դանիէլ մարգարէի գուշակած 490 տարի ժամանակամիջոցը, տաճարի նորոգութիւնից հաշուելով՝ լրանալուն պէս ծնաւ Մեսսիան:

Եւ երրորդ՝ Մեսսիան պիտի գար Յուդայի ցեղից և Յուդայի քաղաքական իշխանութիւնը դեռ չվերջացած, այն ինչ 1904 տարի է անցել, որ Յուդայի քաղաքական իշխանութիւնը վերջացել է Հերովդէսով. և հրէից դեռ ևս ակնկալեալ Մեսսիայի Յուդայի շառաւիղից լինելն այսուհետև հաստատել կամ ապացուցանել անկարելի է, որովհետև տաճարի հետ այրուեցան և անհետացան բոլոր արձանագրական մատեանները, որոնցով կարելի կը լինէր հաստատել և վաւերացնել նոր ծնուելի Մեսսիայի Յուդայի ցեղից լինելը:

բ. Երկրորդ հերետիկոսն Աստուածորդու մարդեղութեան դէմ եղաւ Աղէքսանդրացի Արիոս յոյն երէցն, որ Յիսուսին Աստուած և Որդի Աստծու չէր դաւանում և ոչ հաւատար և

համազոյակից Հօր և Սուրբ Հոգուն, այլ օտար ոմն և արարած՝ բոլոր արարածներից բարձր կատարելութիւններով, բայց ոչ Աստուած և արարիչ: Արիոսը հիմնվում էր Յիսուսի հետեւալ խօսքի վերայ՝ «Հայր իմ մեծ է, քան զիս», այն ինչ այս խօսքը վերաբերվում է Յիսուսի մարդկային խոնարհ վիճակին և բնութեանն:

Այս մոլորութիւնը դատապարտեց Նիկիոյ տիեզերական սուրբ ժողովը 325 թ. Մայսի 20-ին, որին Հայաստանեայց եկեղեցու կողմից ներկայ էր սուրբ Արիստակէս հայրապետը սուրբ Լուսաւորչի հաւանութեամբ: Ժողովը սահմանեց դաւանել Յիսուսին ճշմարիտ Աստուած և Որդի Աստծու համազոյակից և համաբուն Հօր և սուրբ հոգուն: Այս ժողովում խմբագրուեց հաւատի հանդանակը:

գ. Երրորդ հերետիկոսն եղաւ Կոստանդինապոլսի Յունաց Նեստոր պատրիարքը, որ ուրանում էր Յիսուս Քրիստոսի իսկապէս Աստծու որդի և մարդոյ որդի լինելը, և չէր խոստովանում թէ Յիսուս է ճշմարիտ Աստուած և Որդի Աստծու, Յիսուսի մարդկային մարմինը Նորա աստուածութեան բնակարան էր քարոզում, իսկ Սուրբ Կոյս Մարիամին դաւանում էր Մարգարէն, և ոչ Աստուածածին:

Այս մոլորութիւնը դատապարտեց Եփեսոսի տիեզերական սուրբ ժողովը 431 թ. յունիսի 22-ին, որտեղ ժողովում էին 200 հայրապետ:

Ժողովը նզովեց Նեստորին ու նորա աղանդն և խոստովանեց Յիսուս Քրիստոս մի Որդի Աստծու, իսկ Սուրբ Կոյս Մարիամին՝ Աստուածածին:

## Մուրր Երրորդութեան երրորդ անձն Մուրր հոգին

«Հաւատաւք եւ ՚ի սուրբ Հոգին, յանեղն եւ ՚ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ՚ի մարգարէս եւ յառեարսանս. որ էջն ՚ի Յորդանան, քարոզեաց զԱռաւեալն եւ բնակեցաւ ՚ի սուրբսն».

Այս դաւանութեամբ մենք խոստովանում ենք, նախ՝ թէ սուրբ Հոգին ամենասուրբ Երրորդութեան երեք անձերից մինն է անժամանակապէս և անձառապէս Հօրից բոլորեալ կամ ելեալ՝ «Երեքն են, որք վկայեն յերկինս՝ Հայր, Բան և Հոգին սուրբ, և սոքա երեքինս մի են». ա. Յովհ. 6, 7: «Բայց յորժամ եկեսցէ մխիթարիչն՝ զոր ես առաքեցից ձեզ ՚ի Հօրէ՝ զհոգին ճշմարտութեան, որ ՚ի Հօրէ ելանէ, նա վկայեսցէ վասն իմ». Յով. ԺԵ. 26:

Երկրորդ՝ Սուրբ Հոգու Անեղ և կատարեալ ստորագելիները տալով, խոստովանում ենք, թէ Սուրբ Հոգին Հօր և Որդու նման կատարեալ Աստուած է:

Երրորդ՝ խոստովանում ենք, թէ Հոգին սուրբ ունի այն ամեն կատարելութիւններն, ինչ որ ունին Հայր և Որդի. նա արարչակից, գործակից է Հօր և Որդու. նա ամենազէտ է և այլն... «Հոգի Աստուծոյ շրջէր ՚ի վերայ ջրոց». Ծննդ. ա. 2.

Չորրորդ՝ խոստովանում ենք, թէ սուրբ Հոգին ներշնչեց մարգարէներին և առաքեալներին բերանացի կամ գրաւոր աստուածային յայտնութիւններն և

սուրբ Աւետարանը մարդոց ուսուցանելու համար:

Հինգերորդ՝ խոստովանում ենք, թէ մարգարէներն և առաքեալները՝ Սուրբ Հոգու ներշնչմամբ ու շնորհքով զօրացած՝ կարողացան հրաշագործել և գանազան լեզուներով խօսել, որով ապացուցին, թէ իւրեանց առաքելութիւնն Աստուծոց է և ուսումնս երկնային՝ «Քանզի ոչ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարգարէութիւն երբէք, այլ ՚ի հոգւոյն սրբոյ կրեալք՝ խօսեցան մարդիկք յԱստուծոյ». Պետր. 11. Ա. 21.

Վեցերորդ՝ խոստովանում ենք, թէ Սուրբ Հոգին՝ ազաւնու նման իջնելով Յորդանանում մկրտուող Յիսուսի վերայ, վկայեց Նորա Աստուածորդի լինելը. «Եւ անա բացան նմա երկինք, եւ ետես զհոգին Աստուծոյ, զի իջանէր իբրև գաղաւնի և զայր ՚ի վերայ նորա և անա ձայն յերկնից, որ ասէր, դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ». Մատ. Գ. 17:

### ՄՈՂՈՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՍՏՈՒԱ- ԾՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Սուրբ հոգու Աստուածութեան դէմ մոլորութիւն յայտնեց Կոստանդինապօլսի Յունաց պատրիարք, հոգեմարան Մակեդոն, որ սուրբ Հոգու Աստուածութիւնն և նորա կատարեալ անձնաւորութիւնն ուրանում էր, ինչպէս որ Արիոս ուրացաւ Որդու Աստուածութիւնն և մշտնջենաւորութիւնն Հօր հետ և քարոզում էր թէ՝ Հոգին Սուրբ նոցա էութիւնից օտար է և լոկ պաշտօնեայ նոցա:

Սորա մոլորութիւնը դատապարտեց ԿոստանդինաՊօլսի տիեզերական սուրբ ժողովն 150 հայրապետներից բաղ-

կացած, որ 381 թ. Մայսին Մեծն Թէոդոս Կայսեր հրամանով կայացաւ: Այս ժողովին մեր եկեղեցու կողմից ներկայ էր Մեծն Ներսէս հայրապետն: Ժողովը սահմանեց դաւանել Հոգին սուրբ համագոյակից Հօր և Որդուն ու հաւասար նոցա երկրպագելի:

### ՇՆՈՐՀԱՔԱՇԽ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

Շնորհք անուանվում են այն ամեններքին և արտաքին բարիքները, որ պարգևել է և պարգևում է Աստուած հաւատացեալներին:

Շնորհքն երկու կարգի է բաժանվում ա) գերբնական և բ) սովորական:

Գերբնական շնորհքներն անուանվում են մարգարէութիւններ և հրաշագործութիւններ, որ Աստուած հին ուխտի մէջ պարգևում էր մարգարէ անունով ընտրուած սուրբ մարդոց, որոնք պէտք է ներկայում ապագայի մէջ լինելիքը գուշակէին և խօսքով ու հրաշագործութեամբ ժողովրդին դէպի ճշմարիտ Աստուածապաշտութիւնը հրաւիրէին: Իսկ նոր ուխտի մէջ նայն շնորհքներն Աստուած պարգևեց առաքեալներին և նոցա հետևողներին, որպէս զի կարողանան՝ խաւարի իշխանութեանն յաղթելով՝ քրիստոնէական ճշմարտութեան լոյսն ընդհանուր մարդկութեան մէջ տարածել:

Շնորհքը բաշխում է ամենասուրբ երրորդութիւնը, որ մատակարարվում է սուրբ հոգու միջոցով:

Սովորական շնորհքները սուրբ Հոգին բաշխում

է՝ նախ՝ նոցա, որոնք արժանապէս ընդունում են եկեղեցու սուրբ խորհուրդներն. երկրորդ՝ նոցա, որոնք հեղութեամբ և աղօթքով զիւնում են նորան և երրորդ՝ նոցա, որոնք ընդունած շնորհքներն արդիւնաւորում են:

«Ջքաղցեալս լցոյց բարութեամբ և զմեծատունս արձակեաց ունայնս». Դուկ. Ա. 53:

«Ոյր գուցէ տացի նմա և յաւելցի և ոյրն ոչ գուցէ և զոր ունիցի բարձցի 'ի նմանէ» Մատթ. ՄԳ. 12:

Սովորական շնորհքներն, որ սուրբ հոգին մարդոց բաշխում է, սոքա են՝ «Հաւատ, Յոյս, Սէր, Համբերութիւն, Զօրութիւն և Աստուածալաշտական եռանդն, առանց որոնց չենք կարող կատարել Յիսուսի պատուիրաններն և փրկութեան հասնել, որովհետև մարդս միշտ դէպի չարն է հակամէտ,

### Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

«Հաւատամք եւ 'ի մի միայն ընդհանրական եւ սուսմիակական եկեղեցի»

Եկեղեցի բառս Յունարէն էքլիսիա, նշանակում է Քրիստոսի հաւատացողների ժողով, որոնք մի հաւատով, մի յուսով և մի սիրով հաւատում են Աստուծային ճշմարտութիւններին, որով և միացած են միմեանց հետ՝ հոգևոր և բարոյական միութեամբ:

Եկեղեցին իւր սկիզբն ունի նախամարդոց ժամանակներից, որոնք առաջին անգամ պաշտեցին Աստ-

ծուն և հաստատուն յոյս ունեցան խոստացեալ Մեսսիայի փրկութեանը:

Եկեղեցու նպատակը միշտ եղել է մի և անփոփոխ, սակայն զանազան ժամանակներում զանազան տեսակ տնտեսութեան կամ կառավարութեան ձև ըստանալով, ստացել է և զանազան անուններ, օրինակ՝ նախամարդոց ժամանակից մինչև Նոյ նահապետն անուանվում է նախնի եկեղեցի, Նոյից մինչև Աբրահամ և Յակովբ՝ նահապետական. Յակովբի Իսրայել անուանուելուց յետոյ մինչև Մովսէս մարգարէն՝ իսրայելեան:

Նախնի, նահապետական և իսրայելեան եկեղեցիները Մեսսիայի փրկութեան ակնկալութիւնը պահպանում էին բերանացի աւանդութեամբ, բայց երբ Մովսէս տուեց իսրայելեան եկեղեցուն գրաւոր ծէսեր, արարողութիւններ և դատաստանական օրէնքներ, որոնք Յիսուսով կատարուելիք փրկագործութեան ստուերական օրինակներն էին, այն ժամանակից Մեսսիայի գալստեան ակնկալութիւնը պահպանուեց գրաւոր և եկեղեցին անուանուեց Մովսիսական կամ ընդօրինական մինչև Յիսուսի ծնունդն, որ հաստատեց մարդկային հոգիների փրկագործութիւնը, քրիստոնէական եկեղեցու հիմքը դնելով:

Քրիստոնէական եկեղեցին բաժանվում է երկուսի՝ նախ՝ անդրանկաց կամ յաղթանակող եկեղեցի, որ է սուրբ հրեշտակների և հանդուցեալ սրբերի ժողովն՝ երկրնքի կայանում ինչպէս գրում է Պօղոս առաքեալն առ Ներրայեցիս՝ «Մատուցեալ էք... յեկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս և առ դատաւորն ամենե-

ցուն Աստուած. և հոգիս արդարոց կատարելոց» ԺԲ. 23:

Երկրորդ՝ զինուորեալ եկեղեցի, որ են կենդանի հաւատացեալներ. զինուորեալ է ասվում նորա համար, որովհետև հաւատացեալները սպառազինեալ են սուրբ հոգու զէնքով աշխարհի փորձութիւններին դիմադրելու և չարի դէմ պատերազմելու համար, ինչպէս որ գրում է Պօղոս առաքեալն առ Եփեսացիս՝ «Այսուհետև զօրացարուք Տերամբ... և զգեցարուք զսպառազինութիւն Աստուծոյ, զի կարողք լինի ջիք կալ ընդդէմ հնարից սատանայի... վասն այնորիկ առէք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարողք լինիցիք ՚ի դիմի հարկանել չարին յաւուրն չարութեան» 2. 10—14:

Զինուորեալ եկեղեցին բաժանվում է՝ ա) ուսուցանող, որք են առաքեալներ, աւետարանիչներ, քահանաներ և վարդապետներ, ու բ) ուսանող, որ է հաւատացեալ ժողովուրդը:

Եկեղեցու պաշտօնէութիւնը սահմանեց ինքն Յիսուս, առաքելութեան իրաւունքը տալով առաքեալներին և սոքա էլ իւրեանց յաջորդներին հետևեալ խօսքերով՝ «Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և երկրի, որպէս առաքեաց զիս հայր, և ես առաքեմ զձեզ» Մատթ. ԻԷ. 19»:

Յիսուս եկեղեցու պաշտօնեաներին յատկացրեց ուսուցանելու և մկրտելու պարտաւորութիւնները ասելով՝ «Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսս յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ուսուցէք նոցա պահել զամենայն, զոր ինչ պատուիրեցի ձեզ, և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ

զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի»  
Մատթ. ԻԸ. 12—20. և Նա իրաւունք տուեց մարդ-  
կանց մեղքերը թողնելու հետևեալ խօսքերով՝ «Առէք  
զհոգին սուրբ, եթէ ումեք թողուցուք զմեզս՝ թողեալ  
լիցի նոցա, և եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի».  
Յով. Ի. 22, 23:

ՔՐԻՍՏՈՆԷՍԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՅԱՏ-  
ԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քրիստոնէական եկեղեցին ունի չորս յատկու-  
թիւն՝ Միութիւն, Սրբութիւն, Ընդհանրականութիւն  
և Առաքելականութիւն:

Եկեղեցին «մի» է ասվում նորա համար, որ ա-  
մեն հաւատացեալները՝ թէև ազգով, լեզուով, ծէսե-  
րով, արարողութիւններով և վարչական ձևերով բա-  
ժանուած են միմեանցից, սակայն իբրև մի մարմին  
միացած են իւրեանց միակ գլխի—Քրիստոսի հետ մի  
հաւատով, մի յուսով և սի սիրով:

Եկեղեցին «սուրբ» է ասվում նախ՝ որովհետև  
ինչպէս որ իւր գլուխն արգար և անարատ է, այն-  
պէս էլ սուրբ են նորա անդամները, որ Քրիստոսի  
բարոյական մարմինն են. երկրորդ՝ որովհետև սրբ-  
բուած են ամեն տեսակ մեղքերից մկրտութեան շնորհ-  
քով. երրորդ՝ որովհետև սրբութիւն է քարոզում և ա-  
զատ է անմաքուր, մոլար և սուտ վարդապետութիւն-  
ներից. չորրորդ՝ որովհետև նորա մէջ կատարվում են  
քրիստոսագիր, սրբարար և շնորհաբաշխ խորհուրդներ:

Եկեղեցին «ընդհանրական» կամ յունարէն «կա-  
թողիկէ» է ասվում նախ՝ որովհետև քրիստոնէութիւնը  
բոլոր աշխարհիս մէջ տարածուած է և պիտի տա-  
րածուի մինչև աշխարհիս վերջը. երկրորդ՝ նա, դէպի  
իրան դիմող ազգերին մկրտում, սրբում, միացնում  
իւր հետ և անխտիր սիրով ընդունում է իւր ծոցի մէջ:

Եկեղեցին «առաքելական» է ասվում, որովհետև  
Քրիստոսի քարոզած հաւատը հաստատուած է առա-  
քեալների զրուածներին և աւանդութիւնների վերայ:

ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

«Հաւասար... 'ի մի մկրտութիւն, յապաժխարութիւն,  
'ի փառութիւն եւ 'ի թողութիւն մեղաց».

Եկեղեցու խորհուրդներն այն ծէսերն ու արա-  
րողութիւններն են անուանվում, որոնք եկեղեցու  
կարգաւոր պաշտօնեաների՝ ձեռքով՝ որոշեալ նիւթով  
և ձևով մատակարարվում են հաւատացեալներին, որ-  
պէս զի վերջիններս սուրբ հագու շնորհքն ստանան:  
Այս սուրբ արարողութիւնները կոչվում են խորհուրդ,  
որովհետև արարողութիւնները տեսանելի են, իսկ  
Աստուծո շնորհքն անտեսանելի, աներևոյթ: Խորհուրդ-  
ներն եօթն են՝ Մկրտութիւն, Գրոշմ, Ապաշխարու-  
թիւն, Հաղորդութիւն, Ամուսնութիւն, Կարգ կամ  
Չեռնադրութիւն և Օծումն կամ Այցելութիւն հիւան-  
դաց:

## Մ Կ Ր Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Մկրտութիւնն եկեղեցու սրբարար խորհուրդներէն մինն է, որ հաստատեց Յիսուս հաւատացեալներին սկզբնական մեղքից մաքրելու և հոգևոր կեանք պարգևելու համար՝ «Մկրտեցէք զամենայն հեթանոսս յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ»։ Մատթ. ԻԸ. 20:

Մկրտութեան խորհրդի էական բանն է «... ծառայս Աստուծոյ մկրտի յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ»:

Մկրտութեան խորհուրդը կատարում են եկեղեցու կարգաւոր պաշտօնեաները: Նիւթն օրհնած ջուրն է, իսկ արտաքին ձեռն այն է, որ երեսային ջրի մէջ երեք անգամ ընկղմելով՝ միանգամ ասում են՝ «... ծառայս Աստուծոյ մկրտի յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ»:

Երեք անգամ ընկղմելն օրինակ է Քրիստոսի մահուան, թաղման և յարութեան:

Հայաստանեայց եկեղեցին մկրտութիւնը համարում է անկրկնելի. սորա համար էլ հանգանակի մէջ գաւանդում ենք՝ «հաւատամք 'ի մի մկրտութիւն»:

Ծանօթ. Կաթողիկ եկեղեցու կարգաւոր պաշտօնեան մկրտութեան խորհուրդը կատարում է ոչ թէ մկրտողին երեք անգամ սուրբ երրօրգութեան անունով ընկղմելով ջրի մէջ, այլ նորա վերայ երեք անգամ ջուր սրսկելով:

## Դ Ր Ո Շ Մ

Դրոշմն եկեղեցու սրբարար խորհուրդներից մինն է, որ հաստատեց Հոգին սուրբ իջնելով Յիսուսի

վերայ մկրտութեան ժամանակ և առաքեալների վերայ Պենտեկոստէի օրն և նոցա զօրացրեց իւրեանց զժուրատար պաշտօնի մէջ՝ «Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվադակի 'ի ջրոյ անտի և անա բացան նմա երկինք և ետես զՀոգին Աստուծոյ, զի իջանէր իբրև զաղանի և զայր 'ի վերայ նորա»—Մատթ. Գ. 16, 17:

Առաքեալները զրոշմի խորհուրդը կատարում էին ձեռք դնելով մկրտուածների վերայ, որով վերջիններն զգալի նշանով և զօրութեամբ ընդունում էին հոգին սուրբ «Եւ իբրև լուան՝ մկրտեցան յանուն Յիսուսի Քրիստոսի. և 'ի դնել 'ի վերայ նոցա Պօղոսի զձեռն, եկն հոգին սուրբ 'ի վերայ նոցա» Գործք. ԺԹ. 5, 6:

Դրոշմի էական բանն է՝ «Իւր անուշ հեղեալ յանուն Յիսուսի Քրիստոսի կնիք երկնաւոր պարգևաց»։ Նիւթն օրհնած միւռոնն է, իսկ արտաքին ձեռն է մկրտուածի ճակատն, աչքերն, ականջները, քիթը, ձեռքերը, կուրծքը, թիկունքն և ոտները միւռոնով խաչածն օծելը:

Այս զգալի օծութեան միջոցով մկրտուածն ընդունում է սուրբ Հոգու օծութիւնը—չնորհքն և զօրութիւնն ու նոցանով պատերազմ մղելով աշխարհի և նորա մոլութիւնների դէմ՝ յաղթող է հանդիսանում:

Հայաստանեայց եկեղեցին այս խորհուրդը կատարում է մկրտելուց անմիջապէս յետոյ, որովհետև հոգին սուրբն ևս Յիսուսի վերայ իջաւ մկրտուելուց անմիջապէս յետոյ՝ նոյնպէս և առաքեալները ձեռք էին դնում մկրտուածների վերայ նոցա մկրտուելուց անմիջապէս յետոյ:

Մեր եկեղեցին զրոշմի խորհուրդն անկրկնելի է

համարում նոյն իսկ այն պատճառով, ինչ պատճառով որ մկրտութիւնը, որովհետև վերջինն առաջինի շարունակութիւնն է:

Ծանօթ. Կաթողիկ եկեղեցին զրոշմը տալիս է մկրտուածներին 7—12 տարեկան հասակում. այս սովորութիւնը մտաւ ԺԴ դարից:

### Ա Պ Ա Շ Խ Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Ապաշխարութիւնն եկեղեցու խորհրդներէից մինն է, որով զղջացող մեղաւոր հաւատացեալն իւր մեղքերը քահանայի առաջ Աստծուն խոստովանելով՝ իւր հաւատի համաձայն քահանայի միջոցով ստանում է Աստծուց իւր ներգործական մեղքերին թողութիւն:

Ապաշխարութեան խորհուրդը հաստատեց ինքն Յիսուս Քրիստոս ասելով՝ «Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն»: Յիսուս Քրիստոս առաքեալներին տուեց մեղքեր թողնելու իրաւունքը՝ «Փշեաց 'ի նոսա և ասէ, առէք հոգին սուրբ, եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի»: Յով. Ի. 22:

Այս խորհուրդը պէտք է կատարել նախ՝ կատարեալ զղջմամբ, երկրորդ՝ անթերի խոստովանութեամբ և երրորդ՝ հաստատապէս յուսալով, որ Յիսուս Քրիստոսի շարչարանքի արդիւնքով անպատճառ թողութիւն կը ստացուի: Խորհուրդս մատակարարողներն են եկեղեցու կարգաւոր պաշտօնեաները:

### Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ի Թ Ի Ի Ն

Հաղորդութիւնն եկեղեցու սրբարար խորհուրդներէից մինն է, որ Յիսուս Քրիստոս իւր փրկագործ շարչարանքի և մահուան յիշատակի համար սահմանեց Պասեքի տօնի ժամանակ, այսպէս՝ Յիսուս ատնում է իւր ձեռքն անխմոր հացը (բաղարջ), օրհնում է և տալիս է իւր աշակերտներին ասելով՝ «Առէք կերայք այս է մարմին իմ» և ապա ատնելով բաժակն օրհնում է և տալիս է իւր աշակերտներին ասելով՝ «Արբէք 'ի սմանէ ամենեքեան, այս է արիւն իմ»:

«Չայս արարէք առ իմոյ յիշատակի»:

«Քանիցս անգամ եթէ ուտիցէք զհացս զայս և զբաժակս ըմպիցէք, զմահ Տեառն պատմեցէք»: Կորնթ. 1 ժԱ. 26:

Հաւատացեալը հացի և զինու տեսակով ճաշակելով Յիսուս Քրիստոսի մարմինն և արիւնը միանում է Յիսուսի հետ և ընդունում է յաւիտենական կեանքը՝ «Որ ուտէ զմարմինն իմ և ըմպէ զարիւն իմ, նա յիս քնակեսցի և ես 'ի նմա». Յով. Զ. 57:

«Որ ուտէ զմարմինն իմ և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենականս և Նս յարուցից զնա յաւուրն յեանում». Յով. Զ. 58:

Հաղորդուող հաւատացեալը պէտք է ունենայ նախ՝ սրտով զղջումն, երկրորդ՝ հաստատուն հաւատ, երրորդ՝ շերտ ցանկութիւն Յիսուսին մօտենալու և չորրորդ՝ հաստատ որոշումն այլևս չմեղանջելու: Հա-

կառակ զէպքում հաղորդուող հաւատացեալը դատապարտւում է:

Յորհուրդս մատակարարողներն են եկեղեցու կարգաւոր պաշտօնեաները:

Հաղորդութեան էական բանն է «Առէք կերպք» և «Արբէք 'ի սմանէ» խօսքերը: Նիւթն է անխմոր հաց (բաղարջ) և անապակ զինի. արտաքին ձևն է խորհրդի գործողութիւնն, որ կոչվում է պատարագ:

Հաւատացեալը պարտաւոր է տարուայ մէջ մի քանի անգամ հաղորդուիլ: Մեր եկեղեցին անխարաբար ճաշակում է ամեն հասակի հաւատացեալին, իսկ կաթոլիկ եկեղեցին 16 տարեկան հասակից և միայն Մարմնով, իսկ իրանք հոգևորականներն ճաշակվում են Մարմնով և Արիւնով:

Ծանօթ. Յունաց եկեղեցին ընդունում է հաղորդութեան նիւթն խմորով հաց և ջրախառն զինի. կաթոլիկ եկեղեցին՝ բաղարջ և ջրախառն զինի:

### Ա Մ Ո Ի Ս Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ամուսնութիւնն եկեղեցու սրբարար խորհուրդներից մինն է, որ նախ՝ սահմանեց ինքն Աստուած զըրախտի մէջ օրհնելով նախամարդոց միաւորութիւնն ասելով՝ «Աձեցէք և բազմացարուք և լցէք գերկիր»։ Ծննդոց ա. 28, և ապա Յիսուս ամուսնութեան նախկին եղծեալ սրբութիւնը, միաւորութիւնն և անլուծանելի կապը սրբագործեց և հաստատեց ասելով՝ «Զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեացէ»։ Մատթ. ԺԹ. 27: Պօղոս առաքեալն ամուսնութեան

խորհուրդ անուանում է մեծ: Նա առն և կնոջ միաւորութիւնը նմանեցնում է Քրիստոսի իւր եկեղեցու հետ միաւորութեանն ասելով՝ «Յորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ 'ի Քրիստոս և յեկեղեցի» Յիսու. Ե. 32:

Յորհուրդս մատակարարողներն են եկեղեցու կարգաւոր պաշտօնեաները:

Ամուսնութեան էական բանն է «Առեալ զձեռն Եւայի և տուեալ 'ի յաջն Ադամայ և ասէ՛ այս է ոսկր յոսկերաց իմոց և մարմին 'ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ»։ Արտաքին ձևն է առն և կնոջ իւրեանց ազատ կամքով միմեանց ձեռք տալը՝ որով ներքին կերպով, սրտով, կամքով կազմում են մի բարոյական միութիւն և լինում են մի անձն:

### ԿԱՐԳ ԿԱՄ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Կարգ կամ Ձեռնադրութիւնն եկեղեցու սրբարար խորհրդներից մինն է, որ սահմանեց ինքն Յիսուս Քրիստոս Ձիթենեաց սարի վերայ: Նա, իւր համբարձման ժամանակ օրհնելով իւր առաքեալներին՝ իրաւունք տուեց նոցա ուսուցանելու հեթանոսներին, մկրտելու և մարդոց մեղքերին թողութիւն տալու. «Եհան զնոսա մինչև 'ի Բեթանիա և ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա»՝ Դուկ. ԻԴ. 49:

«Եթէ ումեք թողուցուք զմեզս, թողեալ լիցի»։ Յով. Ի. 22:

«Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ուսուցէք նոցա պահել զամենայն,

որ ինչ պատուիրեցի ձեզ՝ Մատթ. ԻԸ. 19, 20:

Հայաստանեայց եկեղեցու օրէնքով այս խորհրդդ ին արժանանում են այն անձինքը, որոնց բարի վարքի և ուսման մասին վկայում է նոցա ընտրող եկեղեցին—ժողովուրդն, և որոնք չունին ոչինչ մարմնական արատ:

Այս ընտրեալները՝ նուիրելով իւրեանց անձն Սատծու ծառայութեանը, դիմում են եպիսկոպոսին, վերջինս օրհնում է նոցա, օծում է սուրբ միւսոնով և իրաւունք է տալիս Սատծու տանը սրբագործութիւն անելու և ժողովրդի հոգևոր պիտոյքը մատակարարելու:

Կարգն ունի եօթն աստիճան՝ Դոնատականութիւն, Դպրութիւն, Երգմնեցուցչութիւն, Ջահակալութիւն, Կիսասարկաւագութիւն, Մարկաւագութիւն և քահանայութիւն:

Եպիսկոպոսն և կաթողիկոսն ևս ըստ կարգի քահանայ են, սակայն քահանայից զանազանվում են իւրեանց պաշտօնի և իշխանութեան գերազանցութեամբ:

Կարգի աստիճանը տրվում է եպիսկոպոսից՝ առաջի հինգն աղօթքով, վեցերորդը ձեռնադրութեամբ, իսկ եօթներորդը ձեռնադրութեամբ և օծմամբ:

### ՕԾՈՒՄՆ ԿԱՄ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՀԻՒԱՆԴԱՅ

Օծումն կամ այցելութիւն հիւանդաց եկեղեցու սրբաբար խորհրդներից մինն է, որ սահմանեց ինքն Յիսուս այցելութիւն անելով հարիւրապետի հիւանդ ծառային և Պետրոսի զօրանչին ու բժշկելով նոցա:

Յիսուս բժշկելու իշխանութիւնը տուեց և իւր առաքեալներին՝ «Նա նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա՝ և բժշկել զամենայն հիւանդութիւնս» Մատթ. Ժ. 1:

«Եւ եղև հայրն Պոպղիայ ՚ի ջերմն և յախտ թանջից հիւանդանալ զնել, առ որ մտեալ Պօղոս և կացեալ յաղօթս, եղ զձեռն և բժշկեաց զնա» Գործք. ԻԸ. 8:

Հայաստանեայց եկեղեցին այս խորհուրդը կատարում է այսպէս՝ քահանան խաչով և աւետարանով զնում է հիւանդի մօտ, կարդում է նորա վերայ սահմանուած աղօթքներն, աւետարանները, գրքերը, սաղմոսներն և շարականները:

Հայոց Մաշտոցում այս խորհուրդն անուանվում է «գիշերային ժամ»:

Հիւանդը ջերմեռանդութեամբ խոստովանում է իւր մեղքերը, հազորդվում Քրիստոսի սուրբ մարմնին և արեանն ու իւր հաւատի համաձայն սասնում է մեղքերին թողութիւն և ցաւերին թեթևութիւն:

Յակովբոս առաքեալն այսպէս է պատուիրում՝ «Հիւանդանայցէ որ ՚ի ձէնջ՝ կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն՝ և արասցեն ՚ի վերայ նորա աղօթս. օծցեն իւղով յանուն Տեառն: Եւ աղօթքն հաւատովքն փրկկեսցէ զաշխատեալն՝ և յարուսցէ զնա Տէր. եթէ մեղս իցէ զործեալ, թողցի նմա» Յակ. Ե. 14—16:

Այս խորհուրդն երբեմն առաքեալները՝ հին ուխտից առած՝ կատարում էին հիւանդին իւղով օծելով, իսկ առաքեալների յաջորդներն և մեր եկեղեցին՝ առաքելական գարից սկսած՝ կատարում են առանց օծման: Քրիստոս ինքը միշտ, իսկ իւր առաքեալները

շատ անգամ, նոյն խորհուրդը կատարում էին առանց օծման, որովհետև՝ ինչպէս Սարգիս շնորհալին ևս ասում է, «Ոչ եթէ իւրն տայ առողջութիւն հիւանդին, այլ անուն Տեառն»:

«Հաւաստւի... ՚ի յարութիւնն մեռելոց».

Այս դաւանութեամբ խոստովանում ենք, թէ աշխարհի վերջն ամեն ննջեցեալների մարմիններն՝ Աստուծու հրամանով յարութիւն առնելով, պիտի միաւորուին իրեանց հոգիների հետ և կենդանի մնացածների հետ միասին պիտի դատուին՝ «Ունիմ զյոյս առ Աստուած, որում զօքս իսկ ակն ունին, թէ յարութիւն լինելոց է արդարոց և մեղաւորաց»։ Գործք. ԻԳ. 15: «Ամենեքեան ննջեսցուք, այլ ոչ ամենեքեան նորոգեսցուք. յանկարծակի յական թօթափել՝ ՚ի փոյ յետին, քանզի փող հարկանի, և մեռեալք յարիցեն առանց ապականութեան, և մեք նորոգիցուք» Կորնթ. ԺԵ. 51—52:

Արդարների մարմինները յարութիւնից յետոյ կը լինեն փառաւոր՝ «Յորժամ Քրիստոս յայտնեսցի՝ կեանքն ձեր, յայնժամ և զուք ընդ նմա յայտնեսցիք փառօք» Կող. Գ. 4: Անապական՝ «Սերմանի ապականութեամբ, յառնէ առանց ապականութեան» ա. Կորնթ. ԺԵ. 42: Անմահ՝ «Քանզի մեռանել ևս ոչ կարեն, զի հաւասար հրեշտակաց են և որդիք Աստուծոյ» Դուկ. Ի. 36: Պայծառ իբրև արեգակն՝ «Յայնժամ արդարքն ծագեսցին իբրև զարեգակն յարքայութեան երկնից»։ Մատթ. ԺԳ. 43:

«Հաւաստւի... ՚ի դասասանն յալիսեկից հոգոց եւ մարմնոց, յարայութիւն երկնից, եւ ՚ի կեանս յալիսեկականս».

Սորանով դաւանում ենք՝ թէ Յիսուս կրկին գալու է աշխարհ և արդարադատ քննութեամբ որոշելով արդարներին մեղաւորներից՝ արդարներին տալու է իւր յաւիտենական արքայութիւնն, իսկ մեղաւորներին մատնելու է դժոխքի յաւիտենական տանջանքին: «Փալոց է Որդի մարդոյ փառօք հօր իւրոյ հանդերձ հրեշտակօք իւրովք, և յայնժամ հասուսցէ իւրաքանչիւր ըստ զօրծս իւր»։ Մատթ. ԺԶ. 27:

«Յայնժամ ասիցէ թագաւորն ցայնասիկ, որք ընդ աջմէն իցեն. եկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեսցէք զպատրաստեալն ձեզ արքայութիւն ՚ի սկզբանէ աշխարհի. ասասցէ և ցայնասիկ, որք ընդ ահեկէն իցեն՝ երթայք յինէն, անիծեալք, ՚ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա... և երթիցեն նոքա ՚ի տանջանս յաւիտենականս և արդարքն ՚ի կեանս յաւտենականս» Մատթ. ԻԵ. 34—46:

Արքայութիւնը մի այնպիսի մեզ անիմանալի վիճակ է, որի մէջ արդարներն յաւիտեան կը վայելեն Աստուծու տեսութիւնը, հրեշտակների և բոլոր սրբերի հետ բնակակից լինելով, ինչպէս որ սուրբ գիրքն ասում է՝ «Զոր ակն ոչ տեսս, և ունին ոչ լուսաւ, և ՚ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց»։ Ա. Կորնթ. Ի. 41:

«Գիտեմք զի յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա

լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա որպէս և էն».  
Ա. Յով. Գ. 2:

«Ապա և մեք որ կենդանւոյն մնացեալ իցեմք,  
նորօք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ  
Տեառն յօդս, և այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն  
լինիցիմք». ա. Թեազ. Գ. 16: «Բազումք յարևելից  
և յարևմտից եկեսցեն, և բազմեսցեն ընդ Աբրահա-  
մու և ընդ Իսահակայ, և ընդ Յակոբու յարքայու-  
թեան երկնից». Մատթ. Ը. 11:

Դժոխքը մի սարսափելի վիճակ է, ուր մեղաւոր-  
ները պէտք է զրկուին Աստու տեսութիւնից, յաւի-  
տեան պիտի տանջուին իւրեանց խղճի խայթից և  
հետևաբար նորա սգի և խաւարի մէջ կապրին. «Նը-  
թիցեն նորա ՚ի տանջանսն յաւիտենականս». Մատթ.  
ԻԵ. 46:

«Եւ ասացէ, ոչ գիտեմ զձեզ ուստի էք, ՚ի բաց  
կացէք յինէն ամենայն մշակք անիրաւութեան, անդ  
եղիցի լալ և կրճել ատամանց». Դուկ. ԺԳ. 27: «Եւ  
որդիքն արքայութեան ելցեն ՚ի խաւարն արտաքին,  
անդ եղիցի լալ և կրճել ատամանց». Մատթ. Ը. 12:

Այսպէս՝ բոլոր մեր սովորած հաւատալիքները  
սորա են՝

1. Գոյութիւն Աստուծոյ,
2. Միութիւն Աստուծոյ,
3. Կատարելութիւնք կամ Ստորոգելիք,
4. Երրորդութիւն Աստուածային անձանց,

5. Արարչագործութիւն,
6. Նախախնամութիւն Աստուծոյ,
7. Մարդեղութիւն Աստուածորդոյն,
8. Միւս անգամ զալուստն Աստուածորդոյն,
9. Իջումն Հոգւոյն սրբոյ ՚ի Յորդանան,
10. Եկեղեցի Քրիստոսի և խորհուրդք Նորա,
11. Յարութիւն մեռելոց և
12. Վերջին դատաստան:

փառաւորութենք յաւիտենական հանդերձեալ կեանքում: Մեր փրկարար յոյսն արտայայտելու միջոցն աղօթքն է:

Ա Ղ Օ Թ Ք

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Յ Ո Յ Ս

Յոյսն աստուածային ներքին շնորհքն է, որով քրիստոնեայն զօրացած առանց կասկածի սպասում է ստանալ Աստուծոց խոստացած արդար վարձատրութիւնը կամ պատիժն իւր գործերի համաձայն: «Ամեն ամեն ասեմ ձեզ, որ զհանն իմ լսէ և հաւատայ Այնմ, որ առաքեացն զիս, ընդունի զկեանս յաւիտենականս» Յով. Ե. 24: Աստուծո խոստացած բարութիւններն են յաւիտենական կեանք, հանգիստ և անվախճան երանութիւն. «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ» Մատթ. ԺԱ. 29.

Մեր դէպի Աստուած ունեցած յոյսի հիմքն այն հաստատուն հաւատն է, թէ Աստուած ծայրագոյն բարի է և թէ մենք հրաւիրուած ենք երջանկանալ նորանով յաւիտեան՝ թէ այս երկրաւոր կեանքում և թէ հանդերձեալում:

Այսպէս մեր յոյսի առարկան Աստուած է, որովհետեւ նա տալիս է մեզ այն շնորհքներն, որ իւր Որդու միջոցով խոստացել է մեզ ներկայ կեանքի մէջ և երկրորդ՝ այն յաւիտենական փառքը, որով պիտի

Աստուծու հետ խօսելը կոչվում է աղօթք:

Աղօթելով նախ՝ մեր սրտի գոհունակութիւն ենք յայանում Աստուծուն մեր վայելած բարիքների համար. երկրորդ՝ խնդրում ենք նորանոր հոգևոր և մարմնաւոր բարիքներ և երրորդ՝ փառաբանում ենք նորա անունը. «Մնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ և այդ ամենայն յաւելցի ձեզ»: Մատթ. 2. 33:

Մարդս աղօթքով կարող է մօտենալ Աստուծուն և հաստատուիլ հաւատի և յոյսի մէջ:

Աղօթքը լինում է հրապարակական, որ շատ աղօթողների հետ միասին կարգացվում է Աստուծու տաճարի մէջ՝ «Ի տաճարի նորա ամենեքեան ասացեն նմա զփառս»: Մաղ. ԻԸ. 9. և առանձնական, որ կատարում է մարդս ինքն առանձին միասնակ Յիսուսի պատուիրանի համաձայն՝ «Մուտ 'ի սենեակ քո, և փակեա զդուռս քո, կաց յաղօթս առ Հայր քո 'ի ծածուկ» Մատթ. 2. 6:

Յիսուս Քրիստոս մեզ այսպէս սովորեցրեց աղօթել՝ «Յորժամ կայցէք յաղօթս մի շատախօսք լինիք... այսպէս կացէք յաղօթս՝

Հայր մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի սևուռն քո. եկեաց արքայութիւն քո, եղիցի կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի. գիսց մեր հաւնապազորդ սուր

մեզ այսօր, եւ քող մեզ գպարսիս մեր, որպէս եւ մեզ քողումք մերոց պարսպակաց. եւ մի՛ սակիւր զմեզ ի փորձարիակ, այլ փրկեա զմեզ ՚ի յարե.

Զի քո է արխայութիակ եւ գորութիակ եւ փառք յարիստեանս, ամէն»: Մատթ. Զ. 7—13:

Այս աղօթքն անուանվում է տէրունական աղօթք եւ բաժանվում է երեք գլխաւոր մասերի՝ ա) Կոչումն, բ) Խնդրուածներ եւ գ) Փառաբանութիւն:

ա. Կոչումն է Հար մեր որ յերկինս ես: Այս խօսքերով Քրիստոս մեզ սովորեցնում է, որ Աստուծոն Հայր անուանենք, որովհետեւ Նա իւր ողորմութեամբ մեզ քրիստոնեաներիս որդի անուանեց. Նա մեզ սիրում է հօր պէս եւ պատրաստ է ամեն բանում մեզ օգնելու: Որ յերկինս ես, ասում ենք այն պատճառով, որ մեր ուշքն ու միտքն երկրաւոր կեանքից վերացնելով՝ հոգևոր կեանքն աչքի առաջ ունենանք աղօթելու ժամանակ:

բ. Խնդրուածներն եօթն են՝

1. Սուրբ եղիցի անուն քո: Սորանով մենք խընդրում ենք, որ նա մեզ տայ կարողութիւն, շնորհք իւր սուրբ անունը մեր մէջ մաքուր, սուրբ պահելու. կարողութիւն տայ որ չար գործերից հեռու մնանք:

Եթէ մենք ստախօսութիւնից, իրար մատնելուց, բամբասելուց, ուրիշին ծաղրելուց, հայհոյելուց եւ ուրիշ սոցա նման մեղքերից հեռու կը մնանք, այն ժամանակ Աստուծոն անունը սուրբ պահած կը լինենք՝ «Տեսցեն զգործս ձեր բարիս եւ փառաւորեացեն զհայր ձեր որ յերկինս է»: Մատթ. Ե. 18:

2. Եկեացէ արքայութիւն քո: Սորանով մենք խընդ-

րում ենք, որ Աստուծո՞ւմ մեզ շնորհք, կարողութիւն տայ, որպէս զի մեղքից հեռանանք եւ նորա արքայութիւնը—սրբութիւնը մեր սրտի մէջ բնակի. իսկ եթէ մեր սրտի մէջ սրբութիւնը կը բնակի, կը նշանակէ, որ մեր մէջ բնակում է Աստուծո՞ւմ, որովհետեւ ինքն Աստուծո՞ւմ սրբութիւն է՝ «Ոչ գայ արքայութիւն Աստուծոյ խորանօք... զի անա արքայութիւն Աստուծոյ ՚ի ներքս ՚ի ձեզ է»: Դուկ. Ժէ. 20:

3. Եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: Այս խօսքերով խնդրում ենք. թէ ինչ որ մենք գործում ենք եւ կամ ինչ որ մեզ է պատահում—այս բոլորն ոչ թէ մեր ցանկացածի պէս լինի, այլ ինչպէս որ Դու, Աստուծո՞ւմ, կամենում ես. ե յայտնում ենք մեր որդիական հնազանդութիւնն այն բոլորն ընդունելու, ինչ որ Նա կը բարեհաճի մեզ տալ, որովհետեւ ինքն Աստուծո՞ւմ գիտէ, թէ մեզ որ ժամանակ ինչ բան է հարկաւոր ու խնդրողին էլ ողորմաճաբար տալիս է:

Նաև խնդրում ենք, որ մեզ կարողութիւն տայ իւր կամքն այնպէս կատարել, ինչպէս որ երկնքում հրեշտակներն եւ արգարները կատարում են՝ «Զի դու, Տէր ամենակալ, զիտես զպէտս մեր եւ զկարիս՝ առաւել քան զոր խնդրեմք եւ իմանամք» ժամագիրք:

4. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Այս խօսքերով խնդրում ենք, որ Աստուծո՞ւմ մեզ տայ մեր մարմնի համար ամենակարևոր պիտոյք—ուտելիք, խմելիք, հագնելիք, բնակարան, որպէս զի կարողանանք ապրել:

Նաև այս խնդրուածով Քրիստոս մեզ սովորեցնում է, թէ միմիայն այս օրուայ համար չմտածենք,

այլ Աստծու վերայ յոյս պիտի դնել, և Նա մեզ կը տայ՝ «Քանզի գիտէ հայրն ձեր երկնաւոր, թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն. խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ և զարդարութիւն նորա և այդ ամենայն յաւելցի ձեզ»։ Մատթ. Գ. 4:

5. Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեր թողումք մերոց պարտապանանց: Այս խօսքերով խնդրում ենք մեր պարտքերն, որ են մեր մեղքերը՝ մեզ ներել, ինչպէս որ մեր դէմ մեղանշողներին ներում ենք:

Աստուած մեզ տուել է օրէնք, եթէ այդ օրէնքը, պատուիրանը չենք կատարում, նշանակում է, որ մենք պարտական ենք մնում Աստծուն—մեղք ենք գործում. եթէ մենք Աստուծոց մեր մեղքերի թողութիւն ենք խնդրում, սակայն մեր ընկերներին չենք ներում, այն ժամանակ Աստուած էլ մեզ չի ներիլ. աղօթողը պիտի խաղաղ հոգի և սէր ունենայ դէպի իւր ընկերները՝ «Եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ հայրն ձեր երկնաւոր զյանցանս ձեր: Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ հայրն ձեր թողցէ զյանցանս ձեր»։ Մատթ. Զ. 14, 15:

6. Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն: Մորանով խնդրում ենք մեզ հեռու պահել վատ պատահմունքներից, որոնք կարող են մեզ մեղքի մէջ ձգել. նաև խնդրում ենք զօրութիւն տալ մեզ փորձանքներին դիմադրելու:

7. Այլ փրկեա՛ զմեզ 'ի շարէ: Մորանով խնդրում ենք ազատել մեզ ամեն տեսակ թշուառութիւնից և անարդարութիւնից. հեռու պահել մեզ վատ մարդիկներից և վատ ճանապարհներից:

Այս եօթն խնդրուածներէից միմիայն չորրորդը վերաբերում է մեր մարմնական պիտոյքներին, իսկ մնացեալ վեցը՝ հոգուն: Մորանով Յիսուս մեզ պարզ հասկացնում է, որ մարդս իւր հոգու փրկութեան համար աւելի պիտի մտածէ, մեծ զգուշութիւններ պիտի բանացնէ, որպէս զի հոգին չկորցնի:

Գ. Փառաբանութիւն է՝ Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն: Այս խօսքերով մենք աղօթողներս Աստծուն փառաբանում ենք, յայտնում ենք մեր շնորհակալութիւնն և յոյսն այն բանի մասին, որ Աստուած մեր խնդրուածը կը կատարի. յայտնում ենք, որ ամեն բարիք Աստծուն է պատկանում, նորա իշխանութեան տակն է գտնվում այն բոլորն, ինչ որ խնդրում ենք. Դու, Աստուած, զօրութիւն ունիս մեր խնդրուածը տալու և քեզ պատկանում է յաւիտեանական փառքը: Ամէն ասելով խոստովանում ենք, թէ վերև ասածներն իրաւ է, այդպէս լինի,—ցոյց է տալիս, որ մենք՝ աղօթելով, Աստծու վերայ յոյս և հաւատ ունինք:

# Մ Ա Ս Ն Ե Ր Ր Ո Ր Դ

## Ս Է Բ

Աստծուն սիրելը մի ներքին շնորհք է, որով առաջնորդվում ենք այս աշխարհումս Աստծու կամքի համաձայն ապրելու՝ այսինքն մեր բոլոր կեանքով Աստծուն նուիրուիլ:

Մեր սիրոյ առարկան Աստուած է, սակայն Յիսուս Գրիստոս սովորեցրեց մեզ, թէ չենք կարող Աստուած սիրել առանց մեր ընկերները սիրելու, ուստի և ասաց Նա օրինականին՝ «Միրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն մտաց քոց. նման սմին սիրեսցես զընկերն քո իբրև զանձն քո. յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարդարէք կախեալ կան»։ Մատթ. ԻԲ. 37:

Քրիստոնէի սէրն առ Աստուած կատարեալ է, երբ նա Աստծու բոլոր պատուիրանները կամ օրէնքները կատարում է անթերի, որովհետև այդ ամենն առաջացած լինելով միևնոյն աղբիւրից հաւասարապէս պարտաւորական են մեզ համար՝ «Այս է սէրն Աստուծոյ, զի զպատուիրանս նորա կատարեսցուք և պատուիրանք նորա չեն ինչ ծանունք»։ Յով. Ե. 3.

Քրիստոնեայն չէ կարող արդարութիւն ձեռք բերել Աստծու օրէնքները միմիայն արտաքուստ (ինչպէս փարիսեցիները) կատարելով. այլ անկեղծութեամբ ընդունելով աւետարանական ճշմարտութիւններն, այն է հաւատով միանալով Յիսուսի հետ. իսկ հաւատը մեռած է առանց սիրոյ, առանց այն մեծ շնորհքի, որ գրեց Յիսուս մեր հոգու մէջ և որ կենդանացնում է մեզ, լուսաւորում և առաջնորդում դէպի յաւիտենական երջանկութիւնը:

## ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՕՐԷՆՔ

Բարի գործերի համար ստեղծուածներս (Եփես. Բ. 16) Աստծուց ստացել ենք միջոցներ բարին չարից ջոկելու: Այս միջոցներն երկու տեսակ են՝ աստուածային ներսի օրէնքն կամ խղճմտանքի ձայնն, և աստուածային արտաքին օրէնքը՝ կամ Աստծու պատուիրանները: Որովհետև այս օրէնքով որոշվում է, կանոնաւորվում է մարդոցս կեանքն ու գործունէութիւնն, ուստի ասվում է բարոյական օրէնք: Ներսի օրէնքն ուրիշ խօսքով ասվում է բնական բարոյական օրէնք, արտաքինը՝ գերբնական, յայտնեալ գրաւոր օրէնք:

## Բ Ն Ա Կ Ա Ն Օ Ր Է Ն Ք

Բնական օրէնք ասելով հասկանում ենք այն օրէնքը, որ Աստուած գրել է մեր հոգու՝ սրտի մէջ և ցոյց է տալիս մեզ թէ ո՞րն է բարին, և ո՞րը չար, թէ

ինչ պէտք է գործենք, և թէ ինչ բանից պէտք է հեռանանք: Այս օրէնքն ամեն մարդու մէջն է, որ է խղճմտանքը, որ մեր կեանքը ղեկավարողն է, նա է վկայ և դատաւոր մեր արարքների. այս պատճառով էր դուր չէ որ մարդիկ խղճմտանքին անուանում են «Աստծու ձայն»: Ով որ խղճմտանքի համաձայն է ապրում, այնպիսին երջանիկ է իւր ամբողջ կեանքումն, մինչև անգամ մահուան անկողնումն, իսկ նա, ով որ խղճմտանքի հակառակ կեանք է վարում, այնպիսին չէ կարողանում նորա խալթերից փախչիլ ու ծածկուիլ, ինչպէս որ, օրինակ, եղբայրասպան Կայէնը:

Սղճմտանքը մեր հոգուն կարողութիւններից մին լինելով՝ հոգու հետ սերտ կապ ունի և կախումն ունի հոգու զարգացումից ու կատարելութիւնից. պատճառն այս է, որ զանազան տեսակ զարգացած մարդոց խղճմտանքը զանազան է իրարից և մինչև անգամ իրար հակադիր:

Նախամարդոց պատուիրանագանցութիւնից յետոյ հոգին կորցնելով իւր սրբութիւնը՝ խղճմտանքն էլ խաւարեց, աղօտացաւ: Թէև մեր խղճմտանքը, որ է բարոյական օրէնք, ինքն ըստ ինքեան գոհացուցիչ է, որի համար որ նշանակուած է նա (Հռով. Ա. 19—20), սակայն մարդոց մեղքի մէջ ընկնելուց յետոյ՝ խղճմտանքը խաւարեց, ուստի բարոյական անկման մէջ թարթափող մարդոց չէր կարողանում ուղղել և հասցնել բարոյական կատարելութեան: Բարոյական օրէնքի այս թերութիւնը նորանից է երևում, որ ընկած մարդը խղճմտանքի ղեկավարութեամբ պարզ կերպով չէ կարողանում իրան Աստծու կամքը ներ-

կայացնել, ուստի չէ կարողանում գնահատել նա բարոյական կեանքն ու գործունէութիւնը, թէ ինքն բարոյական օրէնքի համաձայն է ապրում, թէ ոչ:

Արդ՝ եթէ բնական օրէնքը գոհացուցիչ չէ ընկած մարդուն դէպի բարոյական կատարելութիւն ու փրկութիւն տանելու համար, եթէ այդ օրէնքը մեր մէջ խաւարած ու աղօտ է երևում, ապա ուրեմն՝ անհրաժեշտ է ունենալ լուսի մի այլ աղբիւր, որ կարողանայ այդ օրէնքը լուսաւորել ու պարզել, լրացնել և զօրացնել նորան: Ընկած մարդու այս կարիքին ինքն ամենաբարի Աստուած օգնութեան հասաւ՝ պարզեցնելով յայտնեալ կամ գրաւոր օրէնք: Հին կտակարանում այս օրէնքն Աստուած տուեց Մովսէս Մարգարէի ձեռքով, իսկ նոր կտակարանում՝ Յիսուս Քրիստոսի ձեռքով:

### ՅԱՅՏՆԵՍԼ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՕՐԷՆՔ

Ա. Հ ի ն օ ր է ն ք

Հին օրէնքները նորա են, որոնք Աստուած տուեց իսրայէլացւոց ազգին Մովսէս մարգարէի ձեռքով:

Այս օրէնքները բաժանվում են երեք կարգի՝ ա) Արարողական կամ Ծիսական, բ) Դատաստանական և գ) Բարոյական:

Արարողական կամ ծիսական այն օրէնքներն են, որոնք Աստուած սահմանեց հին ուխտի սէջ աստուածպաշտութեան կարգն ու արարողութիւնները կատարելու ձևերի մասին:

Դատաստանական այն օրէնքներն են, որոնք Աստուած սահմանեց Իսրայէլի որդիներին յանցանքի համաձայն պատժելու:

Թէ արարողական և թէ դատաստանական օրէնքները քրիստոնեաների համար դադարած են, որովհետև Պօղոս առաքեալի ասութեան համաձայն՝ «Մենք ոչ եմք ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք». Հռով. 2. 14:

Իսկ բարոյական օրէնքներն, որոնք տանաբանեայ պատուիրաններն են, կարևոր բացատրութեամբ աւելի պարզուեցան և հաստատուեցան մեզ համար Յիսուս Քրիստոսով՝ «Մի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս և զմարդարէս, ոչ եկի լուծանել, այլ ինով». Մատթ. 5. 17:

### ՏԱՆԱԲԱՆԵԱՅ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ

ա. Ես եմ Տէր Աստուած քո և մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն:

բ. Մի արասցես դու քեզ կուռն ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս ՚ի վեր և որ ինչ յերկիր ՚ի խոնար:

գ. Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո ՚ի վերայ սնտեաց:

դ. Յիշեան սրբել զօրն շաբաթու:

ե. Պատուեան զհայր քո և զմայր. զի բարի լինիցի քեզ և երկայնակեաց լիցիս ՚ի վերայ երկրի:

զ. Մի սպանաներ:

է. Մի շնար:

ը. Մի գողանար:

թ. Մի սուտ վկայեր զընկերէ քումմէ:

ժ. Մի ցանկանար տան ընկերի քո և մի ամենայնի որ ինչ նորա իցէ:

Այս պատուիրաններն ընդհանրապէս առնելով ընդգրկում է մարդու ամբողջ կեանքն իւր բոլոր յարաբերութիւններով ու գործունէութեամբ: Առաջին չորս պատուիրանները հրամայում են սիրել Աստուն իսկ մնացեալ վեցը՝ ընկերոջ, իսկ վերջին պատուիրանների մէջ բովանդակած են և պարտաւորութիւններն զէպի մեր անձն, որովհետև ընկերոջ պէտք է սիրել, ինչպէս որ մենք մեր անձն ենք սիրում:

ա. Ես եմ Տէր Աստուած եւ եւ մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն:

Այս խօսքերով Աստուած հրամայում է ճանաչել նորան միակ ճշմարիտ Աստուածը, հաւատալ նորան, վախենալ նորանից, երկրպագանել և ազօթել նորան:

Արգելում է անաստուածութիւնը, կռապաշտութիւնն, անհաւատութիւնն և յուսահատութիւնը:

բ. Մի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան, ո՛ր ինչ յերկինս ՚ի վեր եւ որ ինչ յերկիր ՚ի խոնար:

Սորանով Աստուած մեզ արգելում է նիւթապաշտութիւն, կեղծաւոր աստուածապաշտութիւն, արբեցութիւն, որկրամոլութիւն, արծաթսիրութիւն... այլ հրամայում է դոցա զէմ առաքինութիւն գործել:

Գ. Մի՛ առնուցու զանուն Աստուծոյ քո ՚ի վերայ  
սնոսեաց:

Այս խօսքերով Աստուած հրամայում է, որ մեր  
խօսակցութիւնների մէջ Աստուած անունն երկիրդով  
յիշենք. նորա անունով միմիայն ճշմարիտ գործերի  
համար երգուենք և այն էլ շատ կարևոր ժամանակ:

Արգելում է Աստուած անունն ամեն բանի համար  
թեթևամտութեամբ յիշել, առանց հարկաւորութեան  
երգուել Աստուած անունով, կեղծաւորութեամբ աղօթել,  
եկեղեցու մէջ խօսել կամ ծիծաղել...

Գ. Յիշեա՛ւ սրբի զօրն շարարու:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է կիւ-  
րակէ և տօն օրերը պահել, առանց ծուլանալու եկե-  
ղեցի գնալ և այնտեղ Աստուած աղօթել, ամբողջ օրը  
բարի գործերին նուիրել, սուրբ զիրքը կարգալ, խրդ-  
մբտանք քննել և գործած սխալանքը զղջալ, աշխա-  
տել մեր նմաններին բարութիւն անել, աղքատներին  
ոգորմութիւն տալ, հիւանդներին այցելել, վատ գոր-  
ծերից հեռանալ, մարմնաւոր աշխատութիւնը դադա-  
րացնել, այսինքն առևտուրը, վարուցանքն, արհեստը...

### Տ Օ Ն Ե Ր

Տօները նուիրած են Յիսուսին, Աստուածածնին,  
Սրբերին և երկնային զօրաց: Այս պատճառով էլ տօ-  
ները լինում են Տէրունական, Աստուածածնի և Սրբ-  
բերի. սոցանից մի քանիսը անշարժ տօներ են, իսկ  
մի քանիսն էլ շարժական:

Անշարժ կոչվում են այն տօները, որոնք ամեն  
տարի միևնոյն ամսաթուին են լինում:

Շարժական կոչվում են այն տօները, որոնք ո-  
րոշեալ ամսաթուեր չեն ունենում, որովհետև Չա-  
տիկն ամեն տարի միևնոյն ամսաթուին չէ պատա-  
հում, և որովհետև տօներէց մեծ մասը կախումն ու-  
նին Չատիկից, այս պատճառով տօներն էլ շարժա-  
կան են:

Անշարժ տօներն են՝ Աւետուհի (7-ին ապրիլի),  
Ծնունդ և Մկրտութիւն Քրիստոսի (6 յունուարի),  
Տեառնընդառաջ (14-ն փետրվ.), Յղութիւն Աստուա-  
ծածնի (9-ին դեկտ.), Ծնունդ Աստուածածնի (8  
սեպտ.), ՚ի տաճար Ընծայումն Աստուածածնի (21-ին  
նոյեմբ.), իսկ մնացեալ թէ տէրունական և թէ սրբ-  
բերի տօները շարժական են:

Տէրունական տօներն են՝ Աւետուհի, Աստուածա-  
յայտութիւն, Թլփատութիւն, Տեառնընդառաջ, Ծաղ-  
կազարդ, Չատիկ կամ Պատեք, Համբարձումն, Հոգե-  
զալուստ, Վարդավառ—Պայծառակերպութիւն Քրիս-  
տոսի և Սուրբ Խաչ:

Աստուածածնի տօներն են՝ Վերափոխումն, Յղու-  
թիւն Աննայից, Ծնունդն, Երեց ամաց ընծայումն ՚ի  
Տաճար:

Սրբերի տօներն են՝ Թագէտոսի և Բարդուղիմէոսի  
երկու տօները՝ Լուսաւորչի երեք տօները, Հրեշտա-  
կապետաց, Ամենայն սրբոց, Սուրբ Էջմիածնի տօն  
(եկեղեցույ տօն), սուրբ Թարգմանչաց—սուրբ Սահա-  
կէ և սուրբ Մեսրոպի, Արգար և Տրդատ թագաւոր-  
ների. Սուրբ Ղևոնդեանց և Սուրբ Վարդանանց տօ-

ները, նաև երեք օրհնագրական սուրբ ժողովների սո-  
ներն և այլն.

Ե. Պատուեա՛ զնայր քո եւ զնայր, զի բարի լինի-  
ցի քեզ եւ երկայնակեաց լիցիս ՚ի վերայ երկրի:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է սրտով  
և գործով պատուել, սիրել, հնազանդուիլ, ծառայել  
և ոչ մի բանով չանպատուել մեր ծնողներին, մեր  
մեծամեծներին, եկեղեցական հովիւներին, բարերարնե-  
րին, ուսուցիչներին և առհասարակ այն բոլոր ան-  
ձանց, որոնք մեր բարիքների համար աշխատում են:

Արգելում է անհնազանդութիւն, օրինազանցու-  
թիւն, ապստամբութիւն, ապերախտութիւն...:

Զ. Մի՛ սպանաներ:

Այս խօսքերով Աստուած արգելում է, որ մարդս  
իրան կամ ուրիշին սպանի գործիքով և թէ խօսքով.  
արգելում է ուրիշի կամ իւր մահը ցանկալ և կամ  
նպաստել այդ բանին. արգելում է ստել, նախատել,  
մատնել, կոտել, ընկերին վատաբանել կամ բամբա-  
սել, ընկերներին գայթակղեցնել վատ օրինակներով...:

Է. Մի՛ շնար:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մա-  
քուր լինել. արգելում է սրտի չար ցանկութիւններ,  
չար մտածմունքն, իւր վատ բովանդակութեամբ խօ-  
սակցութիւններն և երգերը...:

Ը. Մի գողանար:

Սորանով Աստուած արգելում է ամեն տեսակ  
գողութիւն և յափշտակութիւն, արծաթսիրութիւն,

վաճառականութեան մէջ խաբէութիւն, կշռքի և չափի  
մէջ խարդախութիւն, աղքատներին զրկել, մշակների  
և ծառաների վարձը կտրել, պարսպը չվճարել, պան-  
տուածն յետ չդարձնել...:

Հրամայում է ամեն բանի մէջ ճշմարտութիւն,  
արդարութիւն ունենալ:

Թ. Մի՛ սուս վկայեք զընկերէ քումնէ:

Սորանով Աստուած արգելում է ամեն տեսակ  
ստախօսութիւն թէ ստենի առաջ և թէ հասարակու-  
թեան մէջ. արգելում է վատաբանել, չարախօսել, բամ-  
բասել, անարժաններին գովել:

Հրամայում է ճշմարտախօս լինել, ամեն տեղ և  
ամեն ժամանակ ստել «այոն՝ այո. և ոչն՝ ոչ»:

Ժ. Մի՛ ցանկանար զան ընկերի քո եւ մի՛ ամե-  
նայնի որ ինչ նորս իցէ:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեր  
ընկերների վերայ չունենալ չար աչք, չար ցանկութիւն.  
մեր ընկերների թէ ներքին և թէ արտաքին լաւ կողմերի  
վերայ չնախանձել, ընկերներին ոչ մի բան չյափըշ-  
տակել, այլ Աստուած ինչ որ մեզ տուել է, նորանով  
էլ բաւականանալ. ուրիշներին չվնասել, մի խօսքով  
հրամայում է մեր ընկերներին ճշմարտութեամբ սիրել  
ու բարի անել:

Բ. Ն ո ը օ թ է ն ք

Նոր օրէնքները Յիսուսից մեզ աւանդած վար-  
դապետութիւններն են, որոնք առաքեալների և սոցա  
հետևողների միջոցով աւանդուեցան մեզ. Յիսուս

մեզ նոր օրէնք տալով տասն պատուիրանները ոչ թէ միայն չվերացրեց, այլ հաստատեց ասելով՝ «Մի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս, ոչ եկի լուծանել, այլ լինուլ» (Մատթ. Ե. 17). Նա օրէնքը նորանով կատարելագործեց, որ մեռած տառերով չէր հասկանում, այլ կենդանի գործով: Փարիսեցիներն օրէնքը տառացի էին կատարում, շաբաթ օրը հանգատանում էին և ոչինչ չէին գործում, այն ինչ Յիսուս օրէնքը կատարում էր նորա ոգուն նայելով — բարի, սիրոյ գործեր էր կատարում շաբաթ օրը:

Նոր օրէնքը հիմնուած է հետևեալ սկզբունքի վերայ՝ «Զամենայն գոր միանգամ կամիջիք, թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արարէք և դուք նոցա»։ Մատթ. Է. 12:

Նա հրամայում է ապաշխարել մեր մեղքերն, առանց որի մեղաւորին փրկութիւն չկայ, անձնատուր չլինել աշխարհի անցաւոր փառքերին և վայելչութիւններին, ներել միմեանց, ողորմել աղքատներին, սիրել Աստուծուն ամենայն անձնուիրութեամբ, սիրել ընկերին իւր անձի պէս, լինել մարդասէր և բարեացակամ ամենքի համար:

Քրիստոսի բարոյական վարդապետութիւնը համառօտուած է ինն երանութիւնների մէջ՝

Ա. Երանի աղքատաց հոգևով, զի նոցա է արքայութիւն երկնից:

Բ. Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին:

Գ. Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր:

Դ. Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արգարութեան, զի նոքա յագեսցին:

Ե. Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գացեն:

Զ. Երանի այնոցիկ, որ սուրբ են սրաիւք, զի նոքա զԱստուած տեսցեն:

Է. Երանի խաղաղարարաց, զի նոքա սրբիք Աստուծոյ կոչեսցին:

Ը. Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից:

Թ. Երանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ. ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս: (Մատթ. Ե. 3—12):

Ծանօթ. Որպէս զի պարզ տեսնենք, թէ Քրիստոսի նոր օրէնքը որքան բարձր և խորին բարոյական վարդապետութիւն է ներկայացնում, անհրաժեշտ է ուսումնասիրել այդ երանութիւնները, որոնց մէջ ցոյց է տուած բարոյական կատարելութեան ամենաբարձր իդէալն (գերակայ) և նորան հասնելու ճանապարհը:

Երանութիւնների մէջ սկզբնական առաքինութիւնը համարվում է հոգևով ալիստրիւն: Հոգևով աղքատը միշտ դժգոհ է, որ քիչ բարի գործեր է կատարում, այսպիսին բնականաբար ձգտում է դէպի բարոյական գործունէութիւնը, դէպի բարոյական հարստութիւն: Աստուծոյ շնորհքի օգնութեամբ՝ իսկապէս նա ստանում է այդպիսի հարստութիւնը (բ. Կորնթ. թ. 8):

Մարգս՝ երբ խոստովանում է, որ քիչ բարի գործեր ունի կատարած, իրանից դժգոհ է լինում, ուստի նորա մեղքերի վերայ ողբալը, սգալը բնականաբար հետևանք է նորա հոգևոր աղքատ լինելուն. սակայն մի այսպիսի զղումն զբաւական է մարդու ուղղուելուն՝ բարոյական հարստութիւնը ձեռք բերելուն: Սորա համար էլ Փրկիչը խոստանում է այսպիսի մարդոց մխիթարութիւն:

Այն մարդը՝ որ խոստովանում է իւր պակասութիւններն ու ճշմարիտ սրտով զգլում, բնականաբար միևնոյն պակասութիւններն միւս մարդոց յատուկ համարելով՝ ներողամիտ է լինում դէպի նոցա: Սորանից տեսնում ենք, որ մարդու հեղութիւնը երկու նախընթաց առաքինութիւնների հետևանքն է:

Աղքատութեան սերտ կերպով լծորդակից են թէ քաղցն և թէ ծարաւը: Մարդս՝ զգալով քաղցի ու ծարաւի պահանջը ցոյց է տալիս, որ դեռ նորա հոգին փշացած չէ, ապականուած չէ, և թէ նա ընդունակ է կերակուրն ընդունելու և իւրացնելու, երբ նորան կը տան: Այլև այդ պահանջը մարդուն ստիպում է միջոցներ որոնելու իւր քաղցին բաւականութիւն տալու համար, որով իւր մէջ պահանջում է հոգու գործունէութիւնը: Տէրն այսպիսի մարդոց խոստանում է յագեցնել, բաւականութիւն տալ:

Քաղցած ու ծարաւ մարդը լաւ է հասկանում նոյնատեսակ պակասութիւնները միւսների մէջ, միշտ կարեկցում է նոցա և սրտով ցանկանում է նոցա վիճակը թեթևացնել. այսպիսի մարդու մէջ առաջանում է ողորմածութեան զգացմունքը դէպի իւր ընկերն:

Երբ մարդս վերոյիշեալ երանութիւնների յատկութիւնները զգացել է ու փորձով տեսել, այնպիսին ստանում է սրտի մաքրութիւնը, մի այնպիսի կեցութիւն, որպիսին յիշուած է վեցերորդ երանութեան մէջ:

Մաքուր սիրտն ունեցող մարդն աշխատում է միւս մարդոց մէջ էլ սուրբ, մաքուր, պարզ սիրտ գտնել իրար հետ յարաբերութիւններ ունեցած ժամանակ: Այս պատճառով, երբ մարդոց մէջ մտերիմ սրտանց յարաբերութիւնները վերանում են նրանց մէջ թշնամութիւն է սերմանվում, այն ժամանակ սուրբ սիրտն ունեցողը աշխատում է նոցա մէջ վերականգնել առաջուայ խաղաղասիրական յարաբերութիւններն ու թշնամութիւնն հեռացնել: Այսպէս ուրիշների մէջ խաղաղութիւն ձգելը մաքուր սրտի բնական հետևանքն է:

Որովհետև մարդոց մէջ խաղաղասէր յարաբերութիւն-

ների գլխաւոր պատճառը մեծ մասամբ արդարութեան պահանջները չկատարելուց են առաջանում, ուստի ճշմարիտ խաղաղասէրը հոգս է տանում ոչ թէ միայն մարդոց իրար հետ հաշտեցնելու մասին, այլև այդ յարաբերութիւններն արդարութեան սկզբունքների վերայ ամրապնդելու մասին: Այս առաքինութիւնը՝ նախընթացի հետ սերտ միացած՝ արտայայտում է ութերորդ երանութիւնը:

Բայց արդարութեան սկզբունքների հիման վերայ հաշտեցնելը հաստատ և յուսալի կարող է լինել միայն այն ժամանակ, երբ հիմնուած է դա յաւիտենական Արդարութեան—Յիսուս Քրիստոսի վերայ: Այս պատճառով, նորքա, որոնք ցանկանում են ուրիշներին հաշտեցնել և նոցա կեանքը Քրիստոսի—յաւիտենական Արդարութեան վրայ հիմնել, պէտք է իրանց մէջ զգան քրիստոնէական զարկն և այդ կեանքի մէջ թափանցեն ու պատրաստ լինեն ուրախութեամբ համբերելու ամեն տեսակ նախատիւքն ու հալածանքն ամեն բանի համար: Սորանից տեսնում ենք, որ վերջին առաքինութիւնը բնականաբար կապվում է նախընթացի հետ:

## Մ Ե Ղ Ք

Մեղքն է անհնազանդ լինել Աստծու հրամաններին կամ խղճմտանքի հակառակ գործել: «Անհնազանդութեամբ միոյ մարդոյ մեղաւորք բազումք եղեն» Հուով. Ե. 29:

Մեղքի հետևանքը մահ և դատապարտութիւն եղաւ: «'ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին և 'ի մեղաց անախ մահ» Հուով. Ե. 12:

Մեղք լինում է սկզբնական և ներգործական:

Սկզբնական այն մեղքն է, որ մեր նախամարդիկ իւրեանց անհնազանդութեամբ գործեցին, որին ենթակայ են մարդիկ մինչև յանուն Յիսուսի կամ ամենասուրբ երրորդութեան մկրտուիլն:

Ներգործական այն մեղքն է, որ մարդս գործում է մկրտութիւնից յետոյ:

Ներգործական մեղքը լինում է թեթև ու մահուչափ:

Թեթև այն մեղքն է: որ մարդս ակամայ տկարութիւնից ստիպուած գործում է: «Ծառայ, որ ոչ գիտիցէ գկամս Տեառն իւրոյ և արժանի գանի ինչ գործից է, արբցէ գան սակաւ» Ղուկ. ԺԲ. 48:

Մահացու այն մեղքն է, որ մարդս գործում է գիտութեամբ իւր և իւր ընկերներին վնասելու նպատակով, որով զրկվում է արդար և յաւիտենական երջանկութիւնից և Ասածու հետ հաղորդակցութիւնից:

Մահցու մեղքերն եօթն են՝ Հպարտութիւն, Նախանձ, Բարկութիւն, Ծուլութիւն, Ագահութիւն, Որկրամոլութիւն և Բղջախոհութիւն:

Ծանօթ. Սկզբնական մեղքից աղատվում ենք մկրտութեամբ, իսկ ներգործականից՝ ապաշխարութեամբ և հաղորդութեամբ: Հաղորդուելուց առաջ պէտք է խոստովանուիլք քահանայի առաջ ասելով *զ զ ջ ու մ ն՝*

Մեղայ ամենասուրբ երրորդեան՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Մեղուցեալ եմ Աստուծոյ: Սոստովանիմ առաջի Աստուծոյ՝ և Սրբուհւոյ Աստուածածնին, և առաջի քո, հայր սուրբ, զամենայն մեղս, զոր գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով, բանիւ և

գործով. կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, մեղայ Աստուծոյ:

Մեղայ գորութեամբ հոգւոյս՝ խորամանկութեամբ, անզգամութեամբ, յանդգնութեամբ և երկչոտութեամբ, շոպլութեամբ և ժլատութեամբ, զեղխութեամբ և անիրաւութեամբ, չարահաւանութեամբ, յուսահատութեամբ և թերամտութեամբ, մեղայ Աստուծոյ

Հայր սուրբ, զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան և բարեխօս առ միածին Որդին Աստուծոյ, զի իշխանութեամբդ, որ տուեալ է քեզ, արձակեսցես զիս ՚ի կապից մեղաց իմոց, աղաչեմ՝ զքեզ:

1. Հպարտութիւնն է չար ախտ, որով մարդ իւր անձն ընկերներից գերազանց է համարում և այն ամեն բարիքը կամ շնորհքն, որ ունի, ոչ Ասածուց, այլ իւր անձի ընդունակութիւնից առաջացած է կարծում:

Սորա հակառակ առաքինութիւնն է խոնարհութիւնն, որով մարդ իւր անձն ամեն բանով հաւասար է համարում իւր ընկերին և ամենայն հեղութեամբ վերաբերում է զէպի իւր ընկերը:

2. Նախանձը մի վատթար կիրք է, որով մարդ ցաւում է և տխրում ընկերի լաւութեան և յաջողութեան համար և ուրախանում է նորա անբաղդութեան ու անյաջողութեան վերայ:

Նախանձի հակառակ առաքինութիւնն է ընկերասիրութիւնն. որով մարդ ընկերի յաջողութիւնն և ձախորդութիւնն իրանն է համարում ու ցանկանում է նորա համար այն, ինչ որ ցանկանում է իւր համար:

3. Բարկութիւնն է վնասակար հոգեկան յուզմունք,

որով մարդ չկարողանալով տանել մէկից կրած նեղութիւնները կամ պակասութիւնները կատաղի վրէժխնդրութեան ոգւով է վերաբերում դէպի նա:

Բարկութեան հակառակ առաքինութիւնն է երկայնամտութիւնն, որով մարդ համբերատար ոգւով տանում է զուր տեղից կրած նեղութիւններն և պակասութիւնները:

4. Ծուլութիւնն է վնասակար ախտ, որով մարդ իւր անձնական հանգստութիւնը պաշտելով դլանում է կատարել իւր պարտաւորութիւնները:

Սորա հակառակ առաքինութիւնն է արիութիւնն, որով մարդ ոգևորւած միշտ աշխատում է կատարել իւր պարտաւորութիւններն անթերի և միշտ պատրաստ և զգոյշ է պատահելի վտանգներից:

5. Ազանութիւնն է մի ախտ, որով մարդ թէ արդար և թէ անարդար ճանապարհներով յափշտակում է ընկերի սեպհականութիւնը, ջանք է անում միշտ աւելացնել իւր սեպհականութիւններն՝ այն է աշխարհային հարստութիւններն առանց նոցանից բաժին հանելու բարեգործութիւնների համար:

Սորա հակառակ առաքինութիւնն է ողորմածութիւնն, որով մարդ դրդուած իւր արդար վաստակից օգնում է կարօտեալներին և աղքատներին ու բաժին է հանում աստուածահաճոյ գործերին:

6. Որկրամոլութիւնն է մի վնասակար ախտ, որով մարդը անչափաւորութիւն է պահպանում ուտելիքի և ըմպելիքի մէջ, որ ասվում է որովայնամոլութիւն:

Սորա հակառակ առաքինութիւնն է ժուժկալութիւնն, որով մարդ չափաւորութիւն է պահում ուտե-

լիքի, ըմպելիքի և ամենայն ախորժելի բաների մէջ:

7. Բղջախոհութիւնն է մի վնասակար ախտ, որով մարդ անձնատուր է լինում անարգ կրքերին ու ցանկութիւններին:

Սորա հակառակ առաքինութիւնն է ողջախոհութիւնն, որով մարդս ազատ է պահում սիրտը վնասակար մտածմունքներից և իւր անձը հեռու է պահում գայթակղեցուցիչ պատճառներից:

## ԱՂՕԹՔՆԵՐ \*)

Յանուն հօր և Որդւոյ և հոգւոյն Սրբոյ, ամէն.

Փառք քեզ, Տէր, Աստուած մեր.

Փառք քեզ, Աստուած, փառք քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառք քեզ:

Փառք հօր և Որդւոյ և հոգւոյն Սրբոյ ածմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Սուրբ, սուրբ, սուրբ ևս տէր զօրութեանց,

Լի են երկինք և երկիր փառօք քո.

Խնչ, օղնեա, ինձ.

Տէր, ողորմեան.

Աստուած քաւան զիս զմեղաւորս.

\*) Այս մատուց զեօտեղած նիւթն առաջին պատրաստական գասատան գասընթացքն է, և հարկաւոր է վերին դասատանց աշակերտների ու աշակերտուհիների կրկնողութեան համար:

## Դ Ա Ս Ի Յ Ա Ռ Ա Ջ

Ամենաբարի Աստուած, առաքեա՛ առ մեզ շնորհս հոգւոյդ քո սրբոյ, զի պարզեցեցէ մեզ զմիտս և կազդուրեցէ զգօրութիւնս հոգւոց մերոց, որպէս զի մեր ընդունելով զաւանդեալ մեզ ուսմունս զարգացուք քեզ Ստեղծողիդ մերում 'ի փառս և 'ի մխիթարութիւն ծնողաց մերոց, յօգուտ եկեղեցւոյ և հայրենեաց:

## Դ Ա Ս Ի Յ Յ Ե Տ Ռ Յ

Գոհանամք զքէն, Արարիչ, զի արժանի արարեր զմեզ շնորհաց քոց, ընդունելութեան ուսմանս: Օրհնեան զմեծաւորս, զծնողս և զուսուցիչս մեր, որք առաջնորդեն մեզ 'ի զիտութիւն բարութեան, և տուր մեզ կարողութիւն 'ի շարունակութիւն ուսմանս այսօրիկ:

## Ճ Ա Շ Ի Յ Ա Ռ Ա Ջ

Աչք ամենեցուն 'ի քեզ, Տէր, յուսան և Գու տաս կերակուր նոցա ի ժամու. բանաս զձեռն քո և լցուցանես զամենեսին քաղցրութեամբ կամօք քովք:

## Ճ Ա Շ Ի Յ Յ Ե Տ Ռ Յ

Տէր Յիսուս, լցար 'ի բարութեանց քոց: Տացուք զոհութիւն Տեառն Աստուծոյ մերոյ՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Զիտութիւն սեղանոյս անհատ և աննուազ արասցէ Քրիստոս Աստուած մեր, որ զմեզ կերակրեաց և լիացոյց՝ նմա փառք յաւիտեանս. ամէն:

## Ա Ռ Ա Ի Օ Տ Ե Ա Ն

Գոհանամք զբէն, Տէր Աստուած մեր, որ զարթուցեր զմեզ 'ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան Գո: Զարթոն զմիտս մեր արդարութեամբ առ Բեզ, Տէր Աստուած մեր, զի տեսցեն աչք մեր զփրկուածիւն քո, եկեսցէ և բնակեսցի առ մեզ Աստուածութիւն քո և ողորմութիւն քո հովանի և պահապան լիցի 'ի վերայ պաշտօնէից քոց: Եւ զմեզ զձառայիս քո արժանի արան 'ի տուէ և 'ի գիշերի և յամենայն ժամու միշտ խորհիլ 'ի սէր պատուիրանաց քոց և գոհանալով փառաւորել զՀայր և զՄրդի և զՍուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

## Ե Ր Ե Կ Ո Յ Ե Ա Ն

Հրեշտակի խաղաղութեան յանձն արան զանձինս մեր, Տէր զօրութեանց, որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս 'ի տուէ և 'ի գիշերի յարթնութեան և 'ի հանգստեան մերում, զի դու ես, Տէր, Արարիչ լուսոյ և հաստիչ գիշերի:

## Ս Ո Ի Ր Բ Խ Ա Չ Ի

Պահպանեն զմեզ, Քրիստոս Աստուած մեր, ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչի քո 'ի խաղաղութեան. փրկեն յերևելի և յաներևոյթ թշնամուոյն. արժանաւորեն գոհութեամբ փառաւորել զԲեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## Ս Ո Ի Ր Բ Խ Ա Չ Ի

Սուրբ Աստուած, սուրբ և հօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր ողորմեն մեզ:

## Ա Ս Տ Ո Ի Ա Ծ Ա Ծ Ն Ի

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, մայր Քրիստոսի, մատոն զաղաչանս մեր Որդւոյ քո և Աստուծոյ մերոյ: Փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց:

## Յ Ա Ր Ո Ի Թ Ե Ա Ն

Քրիստոս յարեալ 'ի մեռլոց, մահուամբ զմահ կոխեաց, և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց, նմա փառք յաւիտեանս. ամէն:

## Տ Օ Ն Ե Ր

(Պատմութիւնները պէտք է անցնել պատկերների վերայ):

1. Սուրբ Կոյս Մարիամի ծնունդը—Սեպտեմբ. 8-ին:
2. Սուրբ Կոյս Մարիամի ընծայումն տաճարին Նոյեմբերի 21-ին:
3. Սուրբ Կոյս Մարիամի աւետումն—Ապրիլի 7-ին:
4. Յիսուս Քրիստոսի ծնունդը—Յունվարի 6-ին:

5. Տեառնընդառաջ կամ Յիսուսի քառասնօրեայ տաճար տանելը—Փետերովարի 14 ին,
6. Յիսուսի մկրտութիւնը—Յունվարի 6-ին:
7. Յիսուսի պայծառակերպութիւնը կամ Վարդավառ:
8. Ծաղկազարդ:
9. Աւագ Հինգշաբթի:
10. Յիսուսի խաչելութիւնը:
11. Յիսուսի թաղում:
12. Յիսուսի Յարութիւնը—Չատիկ:
13. Համբարձումն:
14. Հոգեգալուստ:
15. Առաջին Լուսաւորիչները—Սուրբ Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալները:
16. Սուրբ Աստուածածնի Վերափոխումն:
17. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ:
18. Խաչվերաց:

1. Մեր հաւատալիքը—Հաւատի հանգանակը տես	հասագրքի	եր.	20
2. Տէրունական աղօթք	»	»	63
3. Տան պատուիրաններ	»	»	72
4. Ինն Երանութիւններ	»	»	79

## Ե Ր Գ Ե Ր

Այսօր տօն է ծննդեան, աւետիս.

Տեառն մերոյ և յայտնութեան, աւետիս,

Այսօր սուրբ կոյս անապական, աւետիս,  
Ծնաւ, երբէր զանմահ արքայն, աւետիս:

Այսօր հրեշտակք յերկնից իջան, աւետիս,  
Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն, աւետիս:

Խորհուրդ մեծ և սքանչելի,  
Որ յայսմ աւուր յայտնեցաւ,  
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս,  
Տան աւետիս աշխարհի:  
Ծնաւ նոր արքայ  
'ի Բեթղեհէմ քաղաքի.  
Որդիք մարդկան օրհնեցէք,  
Ձի վասն մեր մարմնացաւ:  
Անբաւելին երկնի և երկրի  
'ի խանձարուրս պատեցաւ,  
Ոչ մեկնելով 'ի հօրէ  
'ի սուրբ այրին բազմեցաւ:

Այսօր ձայնն հայրական  
Յերկնից իջեալ հաճոյական.  
Սիրեցելոյ Որդոյ վկայն,

Այ յորդօրէ, գեա յորդօրէ, գեա յորդանան,  
Յորդօրական ձայնիւ երգէր մեծ Կարապետն Յովհաննէս:

Յամենայնի օրհնեալ ևս Տէր, օրհնեմք զքեզ. զու-  
վամք զքեզ, գոհանամք զքէն, աղաչեմք զքեզ. Տէր  
Աստուած մեր:

Միայն սուրբ, Միայն Տէր, Յիսուս Քրիստոս,  
'ի փառս Աստուծոյ հօր, ամէն:

Ամէն Հայր սուրբ, Որդիդ սուրբ, Հոգիդ սուրբ:  
Օրհնութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և  
միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Աստուած մեր և Տէր մեր երևեցաւ մեզ օրհ-  
նեալ եկեալ անուամբ տեառն.

Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմ հետէ մին-  
չև յաւիտեան:

Մարմին տէրունական և արին փրկչական կայ  
առաջի, երկնային գորութիւնք յաներևոյթս երգեն և  
ասեն անհանգիստ բարբառով սուրբ, սուրբ, սուրբ  
Տէր գորութեանց:

Խաչի քո Քրիստոս երկրպագանեմք,  
և գտուրք խաչելութիւնդ քո մեծացուցանեմք  
և գտուրք թաղումդ քո փառաւորեմք.  
Եկայք հաւատացեալք, երկրպագեսցուք  
Քրիստոսի Աստուծոյ մերոյ, վասն զի եկն  
'ի ձեռն Խաչին իւրոյ շնորհեաց պարգևս  
աշխարհի:

Սուրբ Աստուած, սուրբ և հօր, սուրբ և անմահ, որ  
խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Փառք սուրբ խաչիդ. ալելուեա  
Խաչելութեանդ, ալելուեա,  
Սրբոյ թագմանդ, ալելուեա.

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց  
և ետուր ուրախութիւն սրտից մերոց:  
'ի պաղոյ, ցորենոյ, զինւոյ և ձիթոյ իւրեանց  
լցուցեր զնոսա:

Յարեալ Քրիստոս 'ի մեռելոց, ալելուեա  
Եկայք ժողովուրդ, երգեցէք Տեառն, ալելուիա  
Յարուցելոյն 'ի մեռելոց, ալելուիա  
Որ գաշխարհս լուսաւորեաց, ալելուիա:



u p q η k q k p p θ h i hu δ k h

à η δ ι j li z n z y z n u v w r

g r ψ p o φ

ku, nu, hu, uy

6 VIII 98

21 m

«Ազգային գրադարան»



NL0161312

